

Դեկտեմբեր 2, 1942

Արժանաշնորհ Հոգեւոր Հովիւ եւ  
Պատուարժան Հոգաբարձութիւն  
Նորթ Թիլատէլիոյ թեմին,

Առաջնորդ Սրբազան Հօր յանձնարարութեամբ կը  
Հաստատուի Ձեր եկեղեցւոյ օծման թուականը, ամսոյս 27-ի  
Կիրակի օր: Օծման արարողութեան օգնելու Համար, Նորին  
Բարձր Սրբազնութիւնը կարգադրած է որ Գերշ. Տ. Յովսէփ  
Ս. Եպս. Կարապետեան ընկերանայ իրեն:

Նորին Բարձր Սրբազնութիւնը ամսոյս 20-ի Կիրակին  
պիտի ըլլայ Ուէտզ Թիլատէլիոյ Համայնքին մէջ եւ կը մնայ  
անոնց Հետ մինչեւ Չորեքշաբթի, ամսոյս 23-ը: Նոյն օրուանէն  
անցնելու է Ձեր Համայնքը եւ կը մնայ մինչեւ Կիրակի, եկե-  
ղեցւոյ օծումը, ուստի զինքը Հիւրասիրելու Հարկ եղած  
կարգադրութիւնները աժմէն իսկ կատարեցէք եւ յիշուած  
Չորեքշաբթի օրը կերթաք եւ զինքը կը ատարդէք Ձեր թեմը:

Հաղորդելով վերոյիշեալը ի գիտութիւն,

Դիւան Առաջնորդարանի

Քարտուղար

Ապրիլ 6, 1943

Արժանաշնորհ  
Տ. Յովհաննէս ԲՀՆյ. Գավուզեան  
Հոգեւոր Հովիւ Ն. Ֆիլա. Թեմին.

Ստացած ենք ամսոյս 5 թուակիր Ձեր գրութիւնը որով կը տեղեկացնէիք թէ Ձեր նախագահութեան ներքեւ կատարուած են Ձեր եկեղեցւոյ հոգաբարձական մասնակի ընտրութիւնները, եւ ներկայացնելով նոր կազմը, կը խնդրէիք վաւերացման պաշտօնագիրը:

Կատարուած ընտրութիւնները գտնելով Համաձայն Սահմանադրութեան օրինաց, այսու կը վաւերացնենք հետեւեալ կարգով. —

Տեաքք	Մինաս Մալումեան	Ա. Ատեմապետ
	Մկրտիչ Ղազիկեան	Բ. Ատեմապետ
	Յովհաննէս Պէպէրեան	Ա. Ատեմաղախի
	Կարապետ Ինճէեան	Բ. Ատեմաղախի
	Արամ Աթթարեան	Փանձապահ
	Կարապետ Անանեան	Խորհրդական
	Պապի Բարոնակեան	"
	Ատեման Ալաշահեան	"

Կօրհնենք նորակազմ հոգաբարձութեան բոլոր անդամները եւ կը մաղթենք որ սիրով եւ գործակցութեամբ բոլորին արդիւնաւոր գործունէութեան շրջան մը, ի փառս եկեղեցւոյ եւ յօգուտ Ն. Ֆիլաղէջիոյ մեր պատուական Համայնքին:

Հայրական սիրոյ ողջունիւ  
Մնամք աղօթարար

Ք. Ա.

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Յուլիս 1, 1946

Մեծայարգ  
Տիար Կ. ՔՆՃԷԿԱՆ  
Ատենապետ պատ. Հոգաբարձութեան  
Ն.ՏիլատէլՏիոյ Համայնքին,

Համայնքիդ նախկին Հոգաբարձուներէն Տիար Արամ Աղզարեան  
ժամանակ մը առաջ մեզ յանձնած էր փոխգիր մը, 961 զուար  
գումարի մը պատկանեալ Ձեր եկեղեցւոյ անտուկինս  
Այժմ, երբ արդէն Առաջնորդարանիս կողմէ Ձեր եկեղեցւոյ  
գնման եւ նորոգութեան հաշիւները քննուած եւ հաստատուած  
են, յիշեալ փոխգիրը կը զրկենք Ձեզ որ անցնէք եկե-  
ղեցւոյ հաշիւներունց համապատասխան ընկալագիրը յղելով  
Տիար Աղզարեանին:

Հայրական ողջունիւ եւ օրհնութեամբ  
Մնամք ազօթարար

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Հոկտեմբեր 22, 1946

Հոգեշնորհ  
Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան  
Նախագահ պատ. հոգաբարձութեան  
Ն. Թիլատէլիիոյ համայնքին.

Րիչմընտի հոգաբարձութիւնը ամսոյս 19 թուակիր նամակով կը յայտնէ թէ զրած է Ձեզ իրենց համայնքին հովուական այցելութեան մը մասին եւ թէ Ձեր կողմէն յայտնուած է իրենց թէ այդ մասին գծուարութիւն մը չկայ:

Այսու կը հրահանգենք Ձեզ որ յիշեալ թուականին երթաք Րիչմընտ եւ Ս. Պատարագի մատուցմամբ, քարոզութեամբ եւ հարկ եղածին կատարմամբ միխթարէք մեր ժողովուրդը նաեւ ուժ տուէք այդ տեղ շինուելիք եկեղեցիի եւ համայնական տան մը շինութեան հրապրին:

Կուզենք նաեւ յայտնել թէ, նկատի ունենալով որ ներկայիս մեր տրամադրութեան տակ այցելու հովիւ չունինք որ կարենանք գէթ մաս մամբ մեր անհովիւ համայնքներու հոգեւոր կարիքներուն բաւարարութիւն տալ, կարգադրած ենք որ երկու ամիսը անգամ մը այցելէք Նիւ Եորքի շրջանի մօտակայ անհովիւ համայնքներէն մին, Ս. Պատարագ մատուցանելու եւ միխթարելու բարեպաշտ ժողովուրդը Րիչմընտի Ձեր այցելութիւնը Հոկտեմբերին համար բաւ կը համարենք, իսկ յաջորդի մասին յետագային կը տեղեկացնենք:

Ողջունիւ սիրոյ  
Ծնամբ աղօթարար

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Rev. Tasker  
N. Phila.

Սեպտեմբեր 13, 1950

Հոգեշնորհ  
Տ.Թորգոմ Վրդ. Մանուկեան  
Նախագահ պատ. Հոգաբարձութեան  
Ն.Ֆիլատելիոյ Համայնքին,

Սիրելի Տ.Թորգոմ,

Ժամանակ մ'առաջ ստացանք Հանրագրութիւն մը՝ մօտաւորապէս 120 անձերէ ստորագրուած, որոնք կը խնդրէին որ շարունակէք մնալ Ձեր պաշտօնին մէջ:

Այս Հանրագրութիւնը նկատի առինք հեզր. Վարչութեան ժողովին մէջ, եւ քանի որ արդէն կանխաւ յանձնարարուած էր Ձեզ շարունակել Ձեր ներկայ պաշտօնը որքան ատեն որ նոր կարգադրութեան մը անհրաժեշտութիւնը չէ ներկայացած, յիշեալ Հանրագրութիւնը արձանագրեցինք իբրեւ Ձեր անձին եւ գործին գնահատութեան եւ յարգանքի արտայայտութիւն մը:

Մնամք Հայրական սիրոյ ողջունիւ  
Աղօթակից

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

N. Phila

Հոկտեմբեր 20, 1950

Հոգեշնորհ  
Տ.Թորգոմ Վրդ. Մանուկեան  
Նախագահ Հոգաբարձութեան Ս.Երրորդութիւն Եկեղեցւոյ  
ի Ֆիլատէլիա

Սիրելի Տ.Թորգոմ,

Մտտ օրէն Տ.Բարգէն Վրդ. Կը մեկնի Անթելիաս, Տանն  
Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսին Հրամանաւ:

Թրոյի Ս.Պետրոս Եկեղեցին անհովիւ չէգելու մտահո-  
գութեամբ, կարգադրեցինք որ Հոգշ. Տ.Մեսրոպ Վարդապետը առժամեայ  
հանգամանքով ստանձնէ Ս.Պետրոս Եկեղեցւոյ Հովութեան պաշտօնը  
ցնոր տնօրինութիւն, եւ միւս կողմէն քանի որ Արժ. Տ.Էլեոն քահա-  
նան իր ուսման համար պարտաւոր է Ֆիլատէլիա մնալ, Հրահանգեցինք  
իրեն որ ստանձնէ Ս.Սահակ-Մեսրոպ Եկեղեցւոյ առժամեայ Հովութեան  
պաշտօնը, նոյնմբեր ամսոյ սկիզբէն սկսեալ, ցնոր տնօրինութիւն,  
ուսանելով հանդերձ իր տրամադրելի ժամանակը տալով Ս.Սահակ Եկեղեցւոյ  
գործերուն:

Հաղորդելով զայս Զեզ՝ կը յանձնարարենք որ Զեր Հոգա-  
բարձութեան եւ Ուսանողական Հիմնադրամի Խնամակալութեան Հետ  
միասին՝ Հարկ եղած կարգադրութիւնը ընէք՝ որպէսզի Տ.Պետրոս քահանան  
ազատ ըլլայ իր առժամեայ Հովութեան պաշտօնը ստանձնելու ժամանակին:

Մնամք հայրական սիրոյ ողջունիւ  
Ազօթակից

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

P. Phila

Հոկտեմբեր 31, 1951

Հոգեշնորհ  
Տ.Թորգոմ Վրդ.Մանուկեան  
Հոգեւոր հովիւ Ս.Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Ֆիլատէլիոյ

Սիրելի Տ.Թորգոմ,

Պատուարժան Կեդրոնական Վարչութեանս հետ խորհրդակցութեամբ որոշած ըլլալով մեր պաշտօնէն բացակայիլ տարուան մը ժամանակով, յառաջիկայ նոյեմբեր 1-էն սկսեալ, զՁեզ Առաջնորդի Փոխանորդ նշանակած ենք որպէսզի մեր բացակայութեան Առաջնորդարանի գործերը վարէք ի գլուխ Կեդրոնական Վարչութեանս:

Մեր հրահանգն է որ անմիջապէս ձեր ծխական գործերը կարգադրէք եւ անյապաղ նիւ Եորթ փոխադրուիք ստանձնելու համար ձեր պաշտօնը:

Ս.Երրորդութիւն Եկեղեցւոյ ծուխին համար առժամեայ հովիւ մը, ձեր բացակայութեան պաշտօնավարելու համար, առաջին առթիւ կը նշանակենք եւ կը ղրկենք:

Մաղթելով Ձեզ կարողութիւն ի Տեառնէ՝

Մնամք հայրական ջերմ սիրով  
Ազօթակից

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

N. Philo

Օգոստոս 22, 1950

Մեծայարգ  
Տիար Արամ Աթթարեան  
Ֆիլատելիա

Սիրելի Պր. Աթթարեան,

Ինչպէս ծանօթ է Ձեզ Պր. Հրանդ Առաքելեան պիտի  
ձեռնադրուի Սեպտեմբեր 10-ին: Մանօթ է մեզ Ձեր ազնիւ եկեղեցաւեր  
հոգաւթիւնը՝ որով բարոյապէս եւ նիւթապէս այնքան օգտակար  
հանդիսացաք Պր. Առաքելեանի Ամերիկա գալուսն եւ հոգեւորականութեան  
պատրաստուելու գործին մէջ: Կը լսենք նաեւ որ հոգաբարձութիւնը  
կը փափաքի եկեղեցւոյ ժողովուրդին անունով ձեռնադրութեան առթիւ  
կնքահայրութիւնը կամ խնամակալութեան պաշտօնը բարի ըլլաք Դուք  
ստանձնել:

Արդեօք կարելի չէր որ Պր. Առաքելեանի ձեռնադրու-  
թեան առթիւ եւս կնքահայր կամ խնամակալ ըլլայիք, որ թէ մեզ, թէ  
ձեռնադրեալին եւ թէ ժողովուրդին ուրախութիւն պիտի պատճառէր:

Մեր շեղ փափաքն ու ցանկութիւնն է որ եթէ կարելի  
է այդ պարտականութիւնը ստանձնէիք՝ յօգուտ եկեղեցւոյն եւ ի յիշա-  
տակ Ձեր ննջեցելոց:

Յուսալով որ մեր այս ցանկութեան ընդառաջ կ'երթաք՝

Մնամք շեղ ցիրով ողջունելով զՁեզ, Ձեր ազնիւ Տիկինն ու  
պատուական զուակը, աղօթարար՝ օրհնութեամբ

Առաջնորդ Հայոց Ամերիկայի



N. Phila,

Նոյեմբեր 1, 1951

Մեծայարգ  
Տօքթ. Հ. Մարգարեան  
Ատենապետ Ն. Ֆիլատևիտսի  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Ֆիլատևիտ

Սիրելի Տօքթ. Մարգարեան,

Հոգշ. Տ. Թորգոմ Վրդ. ին անունով հոգաբարձութեանդ մեր գրած վերջին նամակին ակնարկելով /31 Հոկտեմբեր թուակիր/ կը յայտնենք թէ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մեր պատուական ծուխին առժամեայ հովիւ նշանակած ենք Հոգշ. Տ. Բարբէն Վրդ. Վարժապետեանը, որ յառաջիկայ Նոյեմբեր 5-էն սկսեալ պիտի ձեռնարկէ իր պաշտօնին, զոր պիտի վարէ Զեր Հովիւին բացակայութեան ընթացքին:

Վստահ ենք թէ սիրով եւ յարգանքով պիտի ընդունիք զինք եւ իր գործը պիտի դիւրացնէք, որքան ատեն որ կը մնայ իր պաշտօնին մէջ:

Մնամք հայրական շերմ սիրով  
Աղօթարար

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

M. P. Kila,

Յուլիս 30, 1952

Մեծայարգ  
Տիար Տելեմաք Պարսամեան  
Ատենապետ Հոգաբարձութեան Ս.Երրորդութիւն եկեղեցւոյ  
Ֆիլատէլիայի

Սիրելի Պր. Պարսամեան,

Ստացած ենք Ձեր Յուլիս 22 թուակիր նամակը ի մասին  
Ֆիլատէլիայ մեր եկեղեցւոյն Հովուութեան մասին ըլլալիք կարգադրութեանց:

Այսու կը յայտնենք Հոգաբարձութեանը թէ՛ համաձայն ձեր  
փափաքին՝ Կեդրոնական Վարչութեան մէջ որոշած ենք եկեղեցւոյ Հովուութեան  
պատասխանատուութիւնը յանձնել Հոգշ. Տ.Թորգոմ Վրդ. Մանուկեանին, իսկ  
Արժ. Տ.Արտէն Բհնյ. Աշնեանը նշանակած ենք Հովիւի օգնական:

Արժ. Տ.Արտէն Բահանան պիտի գործէ Հովիւին պատասխանատու-  
թեան ներքեւ: Պիտի ստանայ շաբաթական 60 տուար եւ իր բնակարանի ծախքը:

Իսկ Հոգշ. Տ.Թորգոմ Վրդ.ը բացի եկեղեցւոյ Հովուութենէն՝  
պիտի վարէ նաեւ Առաջնորդարանի Տեղեկատու Դիւանի Տնօրէնի պաշտօնը եւ  
Առաջնորդի Փոխանորդի պաշտօնը: Մամուլի Դիւանի գրասենեակը պիտի փոխադրուի  
Ֆիլատէլիա, եկեղեցւոյ շէնքին մէջ: Իսկ Փոխանորդական գործերուն հա-  
մար Հայր Սուրբը նիւ Եորթ պիտի գայ՝ թէ պատահի որ մեր երկար բացակա-  
յութեան հետեւանքով անհրաժեշտ ըլլայ այդ պարբերաբար:

Գալով Տ. Թորգոմ Վրդ.ի թոշակին՝ անոր 25 առ հարիւրը պիտի  
վճարուի եկեղեցւոյ սնտուկէն իր Հովուական գործին հաշւոյն, թիվ 75  
առ հարիւրը Առաջնորդարանի սնտուկէն: Այս կերպով Հայր Սուրբը եկեղեցւոյ  
գանձէն պիտի ստանայ իր ամսականը՝ տարեկան 1000 տուարի հաշւով:

Վստահ ըլլալով որ այս կարգադրութեանց հետեւանքով եկե-  
ղեցւոյ գործերուն բարւոք ընթացքը յառաջ պիտի տարուի՝ յօգուտ հաւատաց-  
եալ ժողովուրդին եւ ի փառս Աստուծոյ:

Մնամք հայրական սիրոյ ողջունիւ  
Ազօթարար

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

H. Phila

Յուլիս 30, 1952

Հոգեշնորհ  
Տ.Թորգոմ՝ վրդ. Մանուկեան  
Աստ.

Սիրելի Տ.Թորգոմ,

Համաձայն Կեդր. Վարչութեան որոշման՝ եւ Համաձայն Ն. Յիլատէլիոյ Ս.Երրորդութիւն եկեղեցւոյ Հոգաբարձութեան փափաքին, կարգադրած ենք՝ որ Ձեր սիրելութիւնը, պահելով Հանդերձ Մամուլի Տեղեկատու Դիւանի Տնօրէնութիւնը եւ Առաջնորդի Փոխանորդութեան պաշտօնը՝ ստանձնէ միաժամանակ Ս.Երրորդութիւն եկեղեցւոյ Հովուութեան պատասխանատուութիւնը:

Այս նպատակաւ կարգադրած ենք՝ որ Մամուլի Տեղեկատու Դիւանի գրասենեակը փոխադրէք Յիլատէլիա, որ արդէն վերապատուելի Ըրվինի ալ բնակավայրն է:

Որպէսզի միւս կողմէն կարելի ըլլայ Ձեզ Համար վերոյիշեալ պաշտօններու պարտականութեանց Հասնիլ Արժ. Տ.Արտէն ԲՀՆԵ. Աշճեանը նշանակած ենք Ն.Յիլատէլիոյ Ս.Երրորդութիւն եկեղեցւոյ Հովուի օգնական: Տ.Արտէն ԲՀՆԵ. ի թոշակը՝ շաբաթական 60 տուար, եւ իր բնակարանի ծախքը պիտի վճարուի Ն.Յիլատէլիոյ եկեղեցւոյն գանձէն, ինչպէս բնական է:

Գալով Ձեր թոշակին՝ Դուք Ձեր Հովուական գործին Համար Ս.Երրորդութիւն եկեղեցւոյ գանձէն պիտի ստանաք տարեկան Հազար տուար, իսկ Առաջնորդարանի գանձէն տարեկան 3000 տուար:


Որքան ալ Ձեր գործը եւ բնակութիւնը Յիլատէլիա պիտի Հաստատուի՝ այնու Հանդերձ ~~այդ միջոցին~~ եթէ պատահի որ Նիւ Եորքէ երկար ժամանակով բացակայիք, այդ միջոցին Նիւ Եորք պիտի գտնուիք՝ Առաջնորդարանի գործոց Հսկելու Համար:

Մաղթելով Ձեզ կարողութիւն եւ յաջողութիւն ի Տեառնէ,

Մնամք Հայրական շերմ սիրով՝  
Աղօթակից

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

ՀՈԳԲԱՐՉՈՒԹԻՒՆ  
 ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ  
 ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՅ  
 Ն. ՖԻԼԱՏԵԼՖԻԱ, ՓԱ.



Holy Trinity  
 Armenian Apostolic Church  
 North Philadelphia 22, Pa.

Pastor  
 VERY REV. TORKOM MANOOGIAN  
 Pastor's Telephone  
 STEVENSON 4-6807

S. W. Corner  
 Susquehanna Avenue & Marshall Street

Եկեղեցւոյ Հեռագրի  
 FRemont 7-9230

ՀՈԳ. Ս. ԲՈՐԴՈՄ ՎՐԻ. ՄԱՆՈՒԿԵԱՆ  
 Հարկերը Հովիւ

*Կր. Կր. Կր. Կր. Կր.*

*N. Phila.*

Գերաշնորհ  
 Ս. Տիրան Սրբազան Արքեպիսկոպոս  
 Բարեջան Առաջնորդ Կրկնակալի Հայոց, եւ  
 Նախագահ Պատ. Կեդրոնական Վարչութեան  
 Նիւ Եօրթ  
 -----

Փետրուար 10, 1958

Սրբազան Հայր,

Նօրթ Թիլատեմիոյ Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ Անդամական  
 Ժողովը, որ գումարուեցաւ Փետրուար 1ին, որուն ներկայ եղաք նաեւ զուգ  
 եւ բացատրութիւններ տուիք Եկեղեցւոյս Հովիւի փոփոխութեան մասին, ընտրեց  
 հինգ անձերէ բաղկացեալ ներկայացուցչութիւն մը, ներկայ ըլլալու համար  
 Պատ. Կեդրոնական Վարչութեանը Ժողովին, ներկայացնելու ձեզի այն կորուստ-  
 ները որ Եկեղեցին պիտի ունենայ Թորգոմ Հայր Սուրբին տեղափոխումով:

Մեր ներկայացուցիչներն են. -

Տիարք Կարապետ Ինճեան, Տելեմաք Պատմաճեան, Երուանդ ԲարուՆապեան,  
 Մինաս Մալումեան, Մկրտիչ Ղազիկեան:

Յուսալով որ նկատի պիտի առնէք մեր կացութիւնը եւ ըստ այնմ ընէք  
 ձեր կարգադրութիւնները,

Մատչիմք ի համբոյր Ձեր Ս. Աջոյն

Դիման ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

*Կարապետ Ինճեան*  
 ԱՏԵՆԱՊԵՏ

*Տիարք Կարապետ Ինճեան*  
 ԱՏԵՆԱՊԵՏ

*Սուրբ Կարապետ Ինճեան*  
 ՆԱԽԱԳԱՀ

N. Phila

Յուլիս 30, 1953

Հոգեշնորհ  
Տ. Բարգէն վրդ. Վարժապետեան  
Տիլատէլիա

Սիրելի Տ. Բարգէն,

Ձեզի ծանօթ է որ Ն. Տիլատէլիայ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ Հովուութեան պաշտօնը յանձնած էինք Ձեզի կարճ ժամանակի համար միայն:

Այժմ որ Ն. Տիլատէլիայ մեր եկեղեցւոյն Հովուութեան մասին նոր կարգադրութիւն ըրած ենք եւ նկատելով որ Թրոյի Ս. Պետրոս եկեղեցւոյն Հովուութիւնը թափուր է, զՁեզ կը նշանակենք առժամեայ Հովիւ Թրոյի Ս. Պետրոս եկեղեցւոյն:

Առ այժմ պիտի ստանաք նոյն եկեղեցւոյ նախկին Հովիւին վճարուած շաբաթական թոյլակի սակը:


Մեր յանձնարարութիւնն է որ Օգոստոս 10-էն սկսեալ ստանձնէք Ձեր նոր պաշտօնը, հարկ եղած կարգադրութիւններն ընելով առ այդ:

Մաղթելով Ձեզ կարողութիւն եւ արդիւնաւոր գործունէութիւն,

Մնամք հայրական սիրոյ ողջունիւ  
Աղօթակից

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

ՀՈԳԱՍՏՈՒԹԻՒՆ  
 ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ  
 ՀԱՅՏ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՑ  
 Ն. ՖԻԼԱՏԵՆՑԻԱ, ՓԱ.



Holy Trinity  
 Armenian Apostolic Church  
 North Philadelphia 22, Pa.

Pastor  
 VERY REV. TORKOM MANOOSIAN

Pastor's Telephone  
 STEvenson 4-6807

S. W. Corner  
 Susquehanna Avenue & Marshall Street

7 ՓԵՏՐՈՒԼԱՐ 1954

ԱՐՏԵՆ ԲՆՆՑ. ԱՂՃԵԱՆ  
 ՀՈՒՆՑԻՈՐ ԲՈՒՄՆ ԳՐԻ. ՍԱԼՈՒՄԱՆ  
 Հոգեւոր Հովիւ

Եկեղեցւոյ Հեռաձայն  
 FRemont 7-9230

*Handwritten notes:*  
 8 Feb. 1954  
 M. Manosian  
 W.D.

ԳԵՐԱՉՆՈՐՏ  
 Տ. ՏԵՐԱՆ ԱՐՔ. ԳԵՐՍՈՅԵԱՆ  
 ԱՌԱՋՆՈՐԴ ԱՄԵՐԻԿԱՏԱՅՈՅ  
 ՆԻԼ ԵՈՐՔ, Ն. Ե.

ԳԵՐԱՎԱՍԽԻԼ ՍՐԲԱՂԱՆ ՀԱՅՐ,

ՅՈՒՆՈՒԼԱՐ 17-ԻՆ ԻՄ ՆԱԽԱԳԱՏՈՒԹԵԱՄԲ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ  
 ԵԿԵՂԵՑՆԵՐՍ ՏԱՐԵԿԱՆ ԵՒՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ ԸՆՏՐԵՑ 11 ԱՆՂԱՄՆԵՐ ՆՈՐ  
 ԵՒՏԱԿԱՆ ԽՈՐՏՈՒՐԴԻ ՀԱՄԱՐ:

ԸՆՏՐՈՒՄԸ ԱՆՃԻՆՔ ԼԻԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎ ՈՒՆԵՑԱՆ ԻՄ ՆԱԽԱԳԱ-  
 ՏՈՒԹԵԱՄԲ, ՅՈՒՆՈՒԼԱՐ 26-ԻՆ, ԵՒ ԸՆՏՐԵՑԻՆ ԵՒՏԱԿԱՆ ԽՈՐՏՈՒՐԴԻ ԴԻԼԱՆՈՐ,  
 ԱՅՍՎԵՍ.-

ԵՐՈՒՆՂ ԲԱՐՆԱԿԵԱՆ, ԱՌԵՆԱՎԵՍ

ԱՐԱ ԼԻԼԷՃԵԱՆ, ՎՈՒՍ ԱՌԵՆԱՎԵՍ

ՅՈՎՏԱՆՆԵՍ ՊԵՎԻՐԵԱՆ, ԱՌԵՆԱՎԵՍ

ԳՐԻԳՈՐ ԿՈՒՉԵԱՆ, ՎՈՒՍ ԱՌԵՆԱՎԵՍ

ԱՐԱ ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ, ԳԱՆՃԱՎԱՏ

ՄԱՐԹԻՆ ԱԹԹԱՐԵԱՆ, ՕԳՆԱԿԱՆ ԳԱՆՃԱՎԱՏ

ՊԱՎԻ ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ, ԽՈՐՏՈՒՐԴԱԿԱՆ

ՄԱՐԳԻՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ, ԽՈՐՏՈՒՐԴԱԿԱՆ

ՃԱՆ ԶԱԼԸԳԵԱՆ, ԽՈՐՏՈՒՐԴԱԿԱՆ

ՍԵՎՈՒՏ ՄԻՆԱՍԵԱՆ, ԽՈՐՏՈՒՐԴԱԿԱՆ

ՏԵՐԱՆ ՄԻՐԻՃԱՆԵԱՆ, ԽՈՐՏՈՒՐԴԱԿԱՆ

ՀԱՂՈՐԴԵԼՈՎ ԳԱՅՍ ԶԵՐ ՍՐԲԱՂՆՈՒԹԵԱՆ  
 Ի ՎԱԼԵՐԱԳՈՒՄ

ՈՐԴԵՒԱԿԱՆ յԱՐԳԱՆՕՔ  
 Արք. Մ. Արք. Արք.  
 ԱՐՏԵՆ ԲՆՆՑ. ԱՂՃԵԱՆ  
 ՀՈՎԻԼ

Նոյեմբեր 16, 1954

Պատուարժան  
Միական Խորհուրդ  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյն  
Ն. Տիլատէլիա.

Ազնիւ սիրելիք մեր.

Այսու կու գանց յայտնելու Ձեր սիրելիութեան թէ ի  
պաշտօնէ Ձեր Եկեղեցւոյ պատուական ծախին համար ըրած ենք Հե-  
տեւեալ կարգադրութիւնները

Արժանաշատ Տ. Արտէն ԲԸՆՅ. Աշնեան որ երկու տարի-  
ներէ ի վեր եռանդամբ կը հովուէր Ձեր ծուխը. Նոյն պաշտօնով  
գինջը կը փոխադրենք Ուոթթըթաւուի Ս. Յակոբ Եկեղեցւոյ ծախին:  
Անոր պիտի փոխարինէ Ատիս Ապապոյէն ժամանելի Արժանաշատ Տ.  
Վարդան ԲԸՆՅ. Աստուրեանց որ Նիւ Եորք կը հասնի զալ Զորեց-  
շաբթի. օդային ճամբով:

Տէր Վարդանի մասին ունինք բազում հաւատարմութիւնք Ձայն-  
ի անձնաւորութիւններէն ստացած ենք վկայութիւններ իր կարողու-  
թեան ու անձին մասին: Վստահ ենք որ ան պիտի կարենայ արժանաւո-  
րապէս փոխարինել Ձեր այժմու հովիւին:

Յատկապէս կը ցաւինք որ ի վիճակի չէինք աւելի փութով  
Ձեզի իմացնելու մեր այս կարգադրութիւնը. վասնզի վեց շաբաթներէ ի  
վեր կը սպասէինք Տէր Հօր ժամանան. որուն լուրը երկ երեկոյ մի-  
այն իմացանք:

Հազարիցով վերոյիշեալները առ ի գիտութիւն եւ ի գոր-  
ծադրութիւն. կօրհնենք ի սրտէ կազմից բոլոր անդամները. եւ կը  
հայրենք Տէրոջմէն Ձեր ազգային եւ Եկեղեցական գործոց յաջողու-  
թեան համար. ինչպէս նաեւ Ձեզի կը մաղթենք այժ ու կարգադրութիւն:

Մեմօ հայրական օրհնութեամբ եւ սիրոյ ողջունելի

Ազօթաբար

ՄԱՄԱՐԻ ԱՐՁԵՊՍԿՈՑՍ  
Տեղապահ Առաջնորդութեան  
Հայոց Ամերիկայի

Դեկտեմբեր 15, 1954

Մեծայարդ  
Տիար Եղուարզ Բաքու նահանգ  
Ատենապետ Միսական Խորհուրդի  
Ս. Գրիգոր Լուս. Նկեղեցուն  
Ն. Տիլատի Տիա.

Ազնի սիրելի մեր,

Տարույս Նոյեմբեր 16 Թուականա Ձեզի գրած մեր պաշտոնադրով Մուխիզ Հովհաննիսյան ժամանակաւոր պաշտօնին կոչած էինք Ց. Վարդան ԲԿՆՅ. Աստուրեանը

Նկատի ունենալով Տեր Հօր պաշտօնավարումի Հանգամանքի յազարդի մը Միսական Խորհուրդի կողմէ յարգարուած եւ զարմալ նկատի ունենալով ուրիշ Մուխիզ Հովհաննիսյան Համար Թաշնորգարան յղուած իջնորդազիրը Հարկազրուած Ց. Վարդան ԲԿՆՅ. Աստուրեանը նշանակեցինք այն Համայնքի Մուխիզ արժանեայ Հովիւ:

Արդ՝ վերջիցեալ Թուականա Ձեզ գրած մեր պաշտօնադրից այսու կը Համարինք բեկանուած

Յաջողութեան եւ առողջութեան լաւագոյն մազթանցներով.

Միշտ Հայրական օրհնութեամբ եւ սիրոյ ողջունիւ.

Ազօթարար

ՄԱՍՐԻ ԱՐՁԵՐԵՆԿՈՍ  
Ընտրեալ Առաջնորդ  
Հայոց Ամերիկայի



Դեկտեմբեր 16, 1954

Մեծայարգ  
Տիար Սզուար Բարսեղեան  
Ատենայնա Միական Խորհուրդի  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյն  
Ն. Տիլանիճիա

Ազնի սիրելի մեր.

Իբր հետեւանք Մուխիզ ներկայացուցիչներու եւ թմական  
Խորհուրդի միջեւ կատարուած խորհրդակցութեան ի մասին Եկեղեցւոյ  
հոգեւոր պաշտօնեայի մը, այսու կու գանք մեզի յայտնել համալսյիւ-  
թեամբ արուած վերջնական կարգադրութիւնը՝ ըստ հետեւեալի.

Նկատի ունենալով որ Հոգ. Տ. Թարգոմ Վրդ. Մանուկեան ար-  
դէն պաշտօնապէս նշանակուած է Լոնկ Այլընտի նորակազմ համայնքի շի-  
նարարական գիծիին վարիչ.

Եւ նկատի ունենալով մեր կողմէ եկած ստիպողական խնդրանքը  
որ Հայր Թարգոմ վերստանանք Մուխիզ հովուական պաշտօնը.

Որոշեցինք առժամայ կերպով արտօնել Հայր Թարգոմի՝ շարու-  
նակելով հանդերձ իր պաշտօնը ի Լոնկ Այլընտ, ստանձնել նաեւ Եկեղեց-  
ւոյ հոգեւոր մասակարարութիւնը.

Եւ որպէսզի անհասկացողութիւններ չպատահին յառաջիկային՝  
կուզենք այսու հշտի թէ շարաքուան երես օրերը Հայր Թարգոմ պէտք է  
յատկացնէ իր ժամանակը Լոնկ Այլընտի համայնքի գործերուն, իսկ մնաց-  
եալ օրերը մեր Մուխիս:

Այս կարգադրութիւնը պիտի գործադրուի յառաջիկայ Թուեւոտ  
16ին, Կիրակի օրէն սկսեալ:

Յայտնելով զայս ի գիտութիւն եւ մազթելով մեզ յաշուութիւն  
ի Տեառնէ.

Մեամբ հայրական օրհնութեամբ եւ սիրոյ ողջունիւ.

Ազօթացար

ՄԱՄԱՐԻ ԱՐՅԵՊՈՍԿՈՑՈՍ  
Ընտրեալ Առաջնորդ  
Հայոց Ամենիկայի

Նոյեմբեր 16.1954

Արժանաշնորհ  
Տ. Արտին ՔՀՆԿ. Աշենան  
Ֆիլատելիա.

Սիրելի Տէր Արտին.

Այսու կու գանք յայտնել Ձեր սիրելիութեան թէ Ձեզ նշ-  
շանակած ենք Ուղթըրթաւունի Ս. Յակոբ Եկեղեցւոյ Ժամանակաւոր Հով-  
ուական պաշտօնին, եւ այս լուրը հաղորդած ենք յիշեալ Եկեղեցւոյ  
Միակամ Խորհուրդին: Թեմական Խորհուրդն ալ իր կարգին այս կարգա-  
րութեան համաձայն գտնուած է, այնպէս որ ըստ կարելոյն շուտով կը  
փոխադրուիք Ձեր նոր պաշտօնավայրը, ստանձնելու այդ կարեւոր եւ-  
թին Հոգեւոր մատակարարութիւնը:

Լիալոյս ենք որ Ձեր նուիրեալ աշխատանքը, որ միշտ ըս-  
պաս դրած էք Ձեզի վստահուած ճուղի գործերուն համար, ինչպէս նաեւ  
անոր Հոգեւոր եւ ազգային բարօրութեան, նոյնպէս ոգիով եւ շքե-  
կեցութեամբ պիտի շարունակէք Ձեր կարեւոր առաջելութիւնը յոգու-  
ման յանձնուած հօտին:


Հայցեւով Աստուծմէ ոյժ, կարողութիւն եւ ըստ ամենայնի  
յաջողութիւն.

Մեզմէ Հայրական սիրոյ ոգիւնի:

Ազօթարար

ՄԱՄԱՐԻ ԱՐՇԵՆՈՍԿՈՑ  
Տեղապահ Առաջնորդութեան  
Հայոց Ամերիկայի.

ՀՈԳԲԱՐՉՈՒԹԻՒՆ  
ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՅ  
Ն. ՖԻԼԱՏԵԼՖԻԱ, ՓԱ.



Holy Trinity  
Armenian Apostolic Church  
North Philadelphia 22, Pa.

Pastor  
VERY REV. TORKOM MANOOGIAN  
Pastor's Telephone  
STevenson 4-6807

S. W. Corner  
Susquehanna Avenue & Marshall Street

9 ՆՈՅԵՄԲԵՐ 1954

Եկեղեցւոյ Հեռաձայն  
FRemont 7-9230  
ԱՐՏԻՆ ՔԶՆՅՑ՝ ԱՇՃԵԱՆ  
Հոգեւոր Հովիւ

*Handwritten signature/initials*

Գերաշնորհ  
Տ. Մամբրէ Արք. Գալֆայեան  
Տեղապահ Առաջնորդութեան Հայոց Ամերիկայի  
Նիւ Եորք, Ն. Ե.

Գերապատիւ Սրբազան Հայր,

Ստացած ենք Ձեր Հոկտ. 28, 1954 թուակիր նամակը, որով բացատրութիւն կ'ուզէիք եկեղեցւոյս հովիւ Արք. Տ. Արտէն ԳՏՆՅ. ԱՇՃԵԱՆԻ ասկէ ամիս մ'առաջ Հոկտ. 10-ին եկեղեցւոյս բեմէն ներողութիւն խնդրելու մէկ եւոյթի մասին:

Այս կապակցութեամբ Ձեր Սրբազնութեան կը հաղորդենք հետեւեալները:—


1) Մեր հովիւը կանխաւ չէր իմացուցած Եխական Խորհուրդիս, իր կիրակի օրով ընելիք յայտարարութեան մասին: Այս մասին իր բացատրութիւնը այն եղաւ թէ Հոկտ. 8-ին նամակ մը ստացած էր կորտըն կըրպըր անուն իրաւաբանէ մը, որ մէկ շաբաթ պայմանաժամ կը նշանակէր կամ բեմէն ներողութիւն խնդրելու, կամ Առաջնորդարանի կողմէ 'պատժուելու': Տամար, եւ կ'առաջարկէր որ ներողութիւն խնդրելու ձեւը կ'իրարկելով միջադէպը փակուած նկատուի: Յիշեալ իրաւաբանը նոյն նամակով կ'աւելցնէր թէ նամակէն օրինակ մը Առաջնորդարան ղրկած էր: Տ. Արտէն կ'ըսէ թէ նկատի ունենալով ժամանակամիջոցին կարճութիւնը, եւ Ձեզմէ որեւէ հրահանգ կամ յանձնարարութիւն ստացած չըլլալը զինք նեղ դրութեան մէջ ձգելով, պատճառ եղաւ իր առնելիք քայլին:

2) Սեպտեմբեր 21 թուակիր նամակով մը, քաղաքիս երկու քոյր եկեղեցիներու Եխական Խորհուրդներս դիմած էինք Ձեր բարձր միջամտութեան, իբրեւ Գէորգեան ընտանիքի հին հովիւ եւ այժմու բարեկամ, անոնց վրայ ազդեցութիւն բանեցնելու եւ Հայ Եկեղեցին անարգելու իրենց փորձէն ետ պահելու համար: Մեր այս նամակին պատասխան չստացանք ձեզմէ: Ոչ ալ իսկոյն լուր տուիք մեզի թէ որոշած էիք 'Առաջնորդարանի կողմէ երկու հոգի ղրկել, այդ հարցով զբաղելու համար:'

3) Տիկ. Գէորգեան ըստ երեւոյթին բաւարարութիւն ստացած չըլլալով, Հոկտ. 25-ին գրաւոր ներողութիւն պահանջեց մեր հովիւէն, որ մերժեց այդպիսի բան ընել: Ասոր վրայ Եխական Խորհուրդս միաձայն որոշումով իսկոյն եկեղեցւոյս իրաւաբանին յանձնեց խնդիրը, որպէսզի անհրաժեշտ օրինական քայլերը առնուին, մեր հովիւին եւ եկեղեցւոյն պաշտպանութեան համար:

Յուսալով որ մեր բացատրութիւնները բարար են,

*Handwritten signature*  
Ատնադպիր



Սրբազան Կարգանօք  
*Handwritten signature*  
Ատնապետ

Մայիս 2, 1955

Գառուարժան  
Միական Խորհուրդ  
Ս. Սրբաբարձրին Եկեղեցույ  
Ն. ՏիլանկիՅիա.

Ազնի սրբելիք մեր.

Թեմական Խորհուրդի նախագ Ժողովին առաջած իր ներկայացուցիչներու միջոցաւ՝ Լեւկ Ալլընտի Հայք. Եկեղեց. Միութեան Յանձնախումբը յանկեալ բացառութիւններ առջով խնդրեց որ Հոգ. Տ. Թորգոմ Հրդ.Մանուկեան, իրենց շինութեան գործին նշանակուած առժամեայ Լարիչի, յետ այսու առեւի ժամանակ յատկացնէր իրենց կազմակերպչական աշխատանքներուն եւ ամսուան մէջ գտնէ Կիրակի մը Ս. Գառաբազ մատուցանէր:

Թեմական Խորհուրդը, բաւարարութիւն առաւ Համար Լեւկ Ալլընտի Հայք. Եկեղեց. Միութեան Յանձնախումբի Փափագաց, վերահաստատեց Հոգ. Տ. Թորգոմ Հրդ. Մանուկեանի յանձնած Եկեղեցույ Հոգեւոր պետքներ յանձնելն ու Լեւկ Ալլընտի Հայք. Եկեղեց. Միութեան Յանձնախումբի շինութեան աշխատանքներուն առժամեայ Լարիչի Հանգամանքի մասին տուած իր որոշումը. եւ

Նկատի առնելով որ Լեւկ Ալլընտի Հայք. Եկեղեց. Միութեան Յանձնախումբի գործերը առեւի լաւ կրնան աքաղիւնաւորուիլ, եթէ իրենց տեղւոյն վրայ ամսուան մէջ գտնէ Կիրակի որ մը Ս. Գառաբազ մատուցուի:

Թեմական Խորհուրդը յանձնարարեց Հայք Թորգոմին որ գործադրէ կարելի միջոցները, որպէսզի ամսուան մէջ շարաքաղուի մը Խորհուրդի եւ Լեւկ Ալլընտի Եկեղեց. Միութեան Յանձնախումբի միջեւ կայացուած Հատկացութեամբ ազատ կացութեով Եկեղեցույ Հոգեւոր պարտականութիւնն եւ զբաղի Լեւկ Ալլընտի Եկեղեցաշինական գործերով ու Ս. Գառաբազ մատուցանելով միտքաբէ մերթազնի Հաւատացեալ Ժողովուրդը:

Այն Կիրակի օրը որ Հայք Մուսրէս պիտի գտնուի Լեւկ Ալլընտի ներկազմ Համայնքին մէջ, յանձնարարելի է որ Եկեղեցույ մէջ, եթէ այն օր ուրիշ Հոգեւոր Հովի մը ապահովել անկարելի լինի, միայն ժամացութեամբ բաւականանայ:

Հաղորդելով զայս առ ի գիտութիւն եւ ի գործադրութիւն.

Մեամբ Հայրական օրհնութեամբ եւ սիրոյ ողջունել.

Ազօթարաց

ՄԱՄԱՐԻ ԱՐԲՍՊԻՍՊՈՑ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

## Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:  
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE  
NEW YORK 16, N.Y.

Մարտ 2, 1955

Պատուարժան  
Ծխական Խորհուրդ  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Ն. Ֆիլատելիա.

Ազնիւ սիրելիք մեր,

Թեմական Խորհուրդի նախորդ ժողովին առաքած իր ներկայացուցիչներու միջոցաւ Լօնկ Այլլընտի Հայց. Եկեղեց. Շինութեան Յանձնախումբը յաւելեալ բացատրութիւններ տալով խնդրեց որ Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան, իրենց շինութեան գործին նշանակուած առժամեայ Վարիչը, յետ այսու աւելի ժամանակ յատկացնէր իրենց կազմակերպչական աշխատանքներուն եւ ամսուան մէջ գոնէ Կիրակի մը Ս. Պատարագ մատուցանէր:

Թեմական Խորհուրդը, բաւարարութիւն տալու համար Լօնկ Այլլընտի Հայց. Եկեղեց. Շինութեան Յանձնախումբի փափաքաց, վերահաստատեց Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեանի յանձնած Եկեղեցւոյը հոգեւոր պէտքերն յանձնելն ու Լօնկ Այլլընտի Հայց. Եկեղեց. Շինութեան Յանձնախումբի շինութեան աշխատանքներուն առժամեայ Վարիչի հանգամանքի մասին տուած իր որոշումը, եւ

նկատի ունենալով որ Լօնկ Այլլընտի Հայց. Եկեղեց. Շինութեան Յանձնախումբի գործերը աւելի լաւ կրնան արդիւնաւորուիլ, եթէ իրենց տեղւոյն վրայ ամսուան մէջ գոնէ Կիրակի օր մը Ս. Պատարագ մատուցուի:

Թեմական Խորհուրդը յանձնարարեց Հայր Թորգոմին որ գործադրէ կարելի միջոցները, որպէսզի ամսուան մէջ շաբաթավերջ մը Խորհուրդիը եւ Լօնկ Այլլընտի Եկեղեց. Շինութեան Յանձնախումբի միջեւ կայացուած հասկացողութեամբ ազատ կացուցուի Եկեղեցւոյը հոգեւոր պարտականութենէն եւ զբաղի Լօնկ Այլլընտի Եկեղեցաշինական գործերով ու Ս. Պատարագ մատուցանելով միխթարէ մերազնի հաւատացեալ ժողովուրդը:


Այն Կիրակի օրը որ Հայր Սուրբը պիտի գտնուի Լօնկ Այլլընտի նորակազմ համայնքին մէջ, յանձնարարելի է որ Եկեղեցւոյը մէջ, եթէ այն օր ուրիշ հոգեւոր հովիւ մը ապահովել անկարելի լինի, միայն ժամասացութեամբ բաւականանաք:

Հաղորդելով զայս առ ի գիտութիւն եւ ի գործադրութիւն.

Մնամք հայրական օրհնութեամբ եւ սիրոյ ողջունիւ.

Աղօթարար  
*Սուրբ Թորգոմ Վրդ.*

ՄԱՍԲՐԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի



Քի. 344  
Գեղանքի, 16, 1955

Գառուարման  
Միակամ Խաբուար  
Ս. Սարգսյանին հիշեցնելու  
Լորի Երկամիկին:

Ազնի սիրելի ժն:

Շատքան ենք Դիւ. Յ Քուսկի Ձեռ Խաբու, որով էլ  
այսինքն թէ վերջինս Լոզնիքի Յ. Քարամ Լոզ. Ստեփանե,  
Գառուարման Միակամ Խաբուարին որով էլ Խաբուար հիշեցնելու  
Կոմունիստական պարտնիքի թիկնաւ: Եւ Լոզնիքի Յ.  
Լոզնի Արեւայ Գարսիանե:

Ուրտի ենք որ Լայր Քարամ Եւրոպայի խորտ  
է Ձեռ հիշեցնելու, Կոմունիստական Դաւիթ Ան աչք էլ թե-  
լազնե որ Միակամ Դաւիթ Եւրոպայի զինէ Լայր Քարամի, որ-  
զեւզ արտաւէ Կոմունիստական Տեղին Դաւիթ Եւրոպային  
Լայր Լոզնի Կարմ Եւ Կարմ Դաւիթական Վախարեան Կոմ-  
ունիստական Եւրոպայի Կոմունիստական Կոմունիստական

Այս երկու Դաւիթականինց Կոմունիստական են ժն  
Կարմ, Յ. Լոզնի Արեւայի Կոմունիստական Կարմ Կարմ Կարմ  
Կարմունիստական Կոմունիստական Կոմունիստական

Կոմունիստական Կոմունիստական Կոմունիստական:

Մեզ Կոմունիստական սիրելի ուղևորին  
Ազնիքան

ՄԱՐԿԻ ԱՐԵՎԱՅԱՆ  
Կոմունիստական Կոմունիստական

Յուլիս 28, 1955

Պատուարժան  
Միսկան Խորհուրդ  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Ն.Յիլանովիս.

Ազնիւ սիրելիք մեր.

Կը հաստատենք մեր Յուլիս 9 թուակիւ նամակը, որով Ձեզի  
գրած էինք, թէ պիտի Հանայինք Կարգադրել մեր միւս Համայնքներուն  
Հետ որպէսզի Հոգեւորականներն մէկը կամ միւսը պարբերաբար այցելել  
ծուխից:

Այսու կը յայտնենք թէ այժմ կարգ ենք Ձեզ տրամադրել  
Հոգեւորական մը Յուլիս 3, 31, ինչպէս նաեւ Սեպտեմբեր 4 եւ 18 Կի-  
րակիներուն: Եթէ կը փոփոցիք Ս. Պատարագ ունենալ նաեւ Օգոստոս ամ-  
սուան մէջ, հանձնէք մեզի իմացնել Կիրակիները, որպէսզի Հարկը տնօ-  
րինենք:

Հազարդելով զայս ի գիտութիւն.

Մնա՛ք հայրական օրհնութեամբ.

Ազօթաբար

ՄԱՄԱՐԻ ԱՐՁԵՎԻՍՅՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Քիւ 1115  
Հոկտեմբեր 4, 1956

Պատուարժան  
Միական Խորհուրդ  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Նորթ Յիլանսիքս.

Ազնիւ սիրելիք մեր.

Պատուարժան Միական Խորհուրդը տարւոյս Սեպտ. 19 թու-  
կիր նամակով զարմանք կը յայտնէր իմացած այն լուրին վրայ թէ Արժ-  
նաշնորհ Տ. Պողոս ԲՆՆՅ. Սանտակեան ի մտոյ պիտի փոխադրուի Ռիչ-  
մոնտի Համայնքին մէջ:

Հարկ կը Համարինք Ձեզ յիշեցնել թէ Տէր Պողոս Էն-  
նադրուած էր Ռիչմոնտի Ժուլիոն Համարո Տրուած ըլլալով որ իրենց  
եկեղեցին դեռ լրացած չէր եւ Ձեր եկեղեցին ալ երկար ատեն իրկեր  
առանց Հոգեւոր Հովիւի կը մնար, ժամանակաւոր Հանգամանքով Տէր Պո-  
ղոսը նշանակեցինք Ձեր Համայնքին Հովիւ:

Մինչեւ որ կարենանք Ձեր Ժուլիոն Հովիւ մը նշանակել,  
կարգադրութիւն ըրած ենք որ Տէր Պողոս շարունակէ մնալ Ձեր մէջ,  
բայց ամիսը մէկ շաբաթ իր ժամանակը յտակացնէ Ռիչմոնտի Համայնքին,  
ուրկէ պիտի ստանայ այդ շաբաթուան իր թոշակը:

Վստահ ենք որ Պատուարժան Միական Խորհուրդը կըմբռնէ  
մեր ռժպւարութիւնները զորս յառաջ կուզան Հովիւներու նուազու-  
թեան պատճառաւ եւ պիտի սիրէք մեզ գործակցիլ մինչեւ որ կարելի  
լինի յազմահարել տիրոջ աննկ կացութեան:

Հազարգելով զայս առ ի գիտութիւն եւ մաղթելով եկե-  
ղեցաշէն Ձեր գործոց յաշնորհութիւն.

Մեաք Հայրական սիրոյ ողջունիւ  
Ազ. Թաւաթ

ՄԱՄԱՐԻ ԱՐԱՆԳԻՍԿՈՐԱՅ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի





# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

## Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:  
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE  
NEW YORK 16, N. Y.

Քիւ 1258  
Նոյեմբեր 19, 1956

Արժանաշնորհ  
Տ. Գեղոս ԶԿՆՅ. Մանուկեան  
Նախագահ Միսական Խորհուրդի  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Նորթ Տիլտոն Շիւ.  
Սիրելի Տէր Գեղոս,

Այսու կռւ գանք անգամ մը եւս շեշտել, թէ մեր թեմի կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, թեմին մէջ գտնուող բոլոր եկեղեցական կալուածներու սեպհականաթուղթերը պէտք է փոխանցուին եւ արձանագրուին Առաջնորդարանիս անունին: Արդէն մեր ծուխերէն կարելոր մասը իրենց եկեղեցական կալուածներու սեպհականաթուղթերը փոխանցած են Առաջնորդարանիս, մնացեալ ծուխերու կարգին ձեր ծուխն ալ հարկ է որ առաջին առթիւ լրացնէ փոխանցման գործողութիւնը:

Մեր թեմական Պատգամաւորական ժողովները կրկնակի անգամ ըզբաղած են այս օրէնքի գործադրութեան հրատապ հարցով եւ յանձնարարուած է մեզի եւ թեմական Խորհուրդին, հետամուտ ըլլալ որպէսզի կալուածներու փոխանցման վերաբերեալ կանոնադրութեան տրամադրութիւնը անյապաղ գործադրուի մեր բոլոր համայնքներուն կողմէ:

Անհրաժեշտ կը համարինք յիշեցնել որ թեմի կանոնադրութեան յօդուածները--18 /բ/, 67 /իա/, 67 /իդ/, 73, 79, 99, 100, 101 եւ 105-- կը միտին պաշտպանել եւ թոյլ չտալ որ կալուածները ոեւէ սխալմունքներու եւ վէճերու պատճառաւ անհարկիօրէն գրաւի դրուին կամ ձեռքէ հանուին կամ ոեւէ ձեւով վաճառուին: Ծուխերուն պատկանող շէնքերը Առաջնորդարանիս փոխանցուելով հանդերձ իւրաքանչիւր ծուխ կը պահէ իր օրինական իրաւունքը շէնքերուն վրայ եւ առանց Միսական ժողովի որոշումին չի կրնար կարգադրութիւններ ընել կալուածոց մասին:

Պրն. Վինսընդ Եարտըմ, որ կը զբաղի եկեղեցական կալուածոց սեպհականաթուղթերը Առաջնորդարանիս անունին փոխանցման գործով, կարող է ձեզի խորհուրդ տալ կալուածոց փոխանցման գործողութիւնը ինչպէս կատարելու մասին: Հաճեցէք յարաբերութեան մէջ մտնել Պրն. Եարտըմի հետ, որուն հասցէն կերելի ստորեւ: Կ'ուզենք յայտնել թէ կալուածոց փոխանցման համար ըլլալիք իրաւական ծախքերը պիտի հոգայ Առաջնորդարանս:

Mr. Vincent Yardum  
41 East 42nd St.  
New York, N.Y.

Մնամ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՄԱՄԱՐԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 2195  
Սեպտեմբեր 23, 1957

Պատուարժան  
Միական Խորհուրդ  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Նոր՝ Յիլատեւիտ.

Ազնիւ սիրելիք մեր.

Իր ժամանակին ստացած ենք ամսոյս 4 թուակիր Զերնամա-  
կը. որով կը յայտնէիք Արժանաշնորհ Տ. Արտէն ԶԿՆՅ. Աշնան Հաւանած  
է կարգ մը պայմաններով ընդունիլ Ձեր Եկեղեցւոյ Հովուական պաշտօնը,  
եւ դուք լիութիւն Համաձայն ըլլալով Տէր Արտէնի ներկայացուցած պայման-  
ներուն կը խնդրէիք որ զինքը արտօնէինք:

Ձեր սոյն գրութիւնը ստանալէն վերջ իսկոյն յարաբերու-  
թեան մէջ մտանք Տէր Արտէնի Հետ, որը իր կարգին մեզմէ խնդրեց յայտ-  
նեցնել մեր այդ արտօնութիւնը մինչեւ որ կարենաք իր Միական Խորհուր-  
դի Հետ խորհրդակցիլ: Այդ խորհրդակցութեան արդիւնքը արդէն Տէր Արտէն  
Ձեզի Հաղորդած է եւ մեզի ալ Հնոաձայնով յայտնեց թէ իր ներկայի պաշ-  
տօնը պիտի շարունակէ մինչեւ Մայր Աթոռէն մեր վերադարձը:

Եղած կարգադրութեան Համաձայն Արժանաշնորհ Տ. Դօդոս  
ԶԿՆՅ. Մանուկեան ամսուան մէջ երկու կիրակի պիտի տրամադրէ ծուխիդ  
Հոգեւոր մատակարարութեան: Մինչ այդ, լնչպէս բերանացի մեզի յայտնած  
էիք նախապէս, եթէ կուզէք որ Մկրտիչ Արկ. Մուրատեանը Ձեզի տրամադ-  
րենք, Հանձնէք Առաջնորդարանս իմացնել որպէսզի ըստ այնմ Հարկ եզանց  
տնօրինենք Տիրացու Մկրտիչի մասին:

Հաղորդելով զայս առ ի գիտութիւն եւ մաղթելով եկեղեց-  
ցաշէն Ձեր գործոց յաջողութիւն.

Մնամք Հայրական օրհնութեամբ  
Աղօթարար

ՄԱՄԱՐԻ ԱՐԲԵՂԻՍԱՊՈՍ  
Առաջնորդ Ամերիկայի Հայոց

Քի. 3451  
Յունիս 26, 1958

Արժանաշնորհ  
Տ. Սարգիս ՌԵՂ. Գաշրգճեան  
Նախագահ Միական Պարտուրդի  
Ս. Սըրբազուժիւն Միկելեցույ  
Նորթ Ճիլսանիճիս.

Սիրելի Տէր Սարգիս.

Նկատի ունենալով որ Հարթնքոտի մեր Համայնքին եկեղեցական եւ վարչական գործերը կը կարօտին Հոգածու աշխատանքի. մենք Հարկադրաբար մեր եկեղեցույ աւագ Թարկաւոյ Մկրտիչ Մուրաթեանն նշանակած ենք յիշեալ եկեղեցույ պաշտօնեայ:

Թարեշնորհ Մկրտիչ Սրկ. Մուրաթեանի փոխադրութեամբ գրանց որ զուր պիտի ունենայ կարգ մը գնուարութիւններ. բայց ի վերջի պիտի կարենայ յազմահարել:

Մկրտիչ Թարկաւոյի Համար կարգադրութիւն եղած է Հարթնքոտի Թուրքի մէջ փոխադրուիլ 1958 Յունիս 11ին, կարենալ ընթացք աւելու իր նոր պարտականութեանց:

Հողորդելով զայս առ ի գիտութիւն եւ օրհնելով ձեզ եւ Գաուարժան Միական Պարտուրդի թուր անդամները.

Մեմբ Հայրական սիրոյ ոգջուներ  
Ազօթարար

ՄԱՄԱՐԻ ԱՐՅԵՂՍՈՒՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 294  
Մայիս 13, 1959

Արժանաշնորհ  
Տ. Սարգիս ՌԸՄ. Գաշզգնեան  
Նախագահ Միսկան Խորհուրդի  
Ս. Մրրորդութիւն Եկեղեցւոյ  
Նորթ Զիլաակի Զիւ.

Սիրելի Տէր Սարգիս.

Գալիճօրնիոյ Հայոց Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարսէն Ս. Եպս.  
Արժանանան թեմիս այցելութիւն պիտի տայ Մայիս 27ին եւ պիտի մնայ  
մէկ երկու շաբաթ:


Իր այս այցելութեան առթիւ Նորին Սրբազնութիւնը կը փոփոխի  
բոլոր իր նախկին ծախի՝ այցելել Համայնորդ Մայիս 31ին եւ եկեղեց-  
ւոյդ մէջ Ս. Կատարազի մատուցմամբ միտիմարել Հաւատացեալ ժողովուրդը:

Կը յանձնարարենք Ձեզ եւ պատուարժան Միսկան Խորհուրդիդ պէտք  
եզան կարգադրութիւնը ընել եւ պատշաճ ընդունելութիւնը ընծայել Նորին  
Սրբազնութեան:

Մեամբ Տիրուանդ սիրոյ ողջունելի  
եւ օրհնութեամբ  
Ազօթարար

ՍԻՈՆ ԱՐՁԵՒՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ  
Ն. ՖԻԼԱՏԵԼՖԻԱ, ՓԱ.



Holy Trinity  
Armenian Apostolic Church

North Philadelphia 22, Pa.

CHURCH PHONES  
Hall: POplar 9-9230  
Pastor's office: POplar 3-6807

Եկեղեցւոյ Հեռաձայն  
Մաս' POplar 9-9230  
Հովիտի Գրասենեակ' POplar 3-6807

S. W. Corner  
Susquehanna Avenue & Marshall Street

Մեկտ. 26, 1959  
ՖԻԼԱՏԵԼՖԻԱ

ԳԵՐԱՉՆՈՐՏ  
Տ. ՍԻՌՆ Ս. ԱՐՔԵԿԱԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆ  
ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ  
ՆԻԼ ԵՈՐՔ

ՍՐԲԱՂԱՆ ՀԱՅՐ,

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑՆՈՅ ԴԱՐԱՅ ԴԱՍԸ, ԴԵԿՏ. 13-Ի ԿԻՐԱՒ  
ԿԻՆ, ԱԻՏԻ ԿԱՏԱՐԷ ԻՐ ՏԻՄՆԱՂԵՐՈՒԹԵԱՆ 30-ՐԴ ՊԱՐԵՂԱՐՃԸ:

ՄԵՂԻ ՏԱՄԱՐ շԱՊ ՔԱՉՄԼԵՐԻՉ ԵՆ ՈՒՐԱԽԱԼԻ ԱԻՏԻ ԸԼԼԱՅ, ՁԵՐԴ  
ՍՐԲԱՂՆՈՒԹԻՒՆՐ ՄԵՐ ՄԷՉ ՈՒՆԵՆԱԼ ԱՅԴ ՕՐ:

ՎՍՏԱՏ ԵՆՔ ՈՐ ՁԵՐ ՀԱՅՐԱԿԱՆ ՏՈՎԱՆԱԼՈՐՈՒԹԻՒՆՐ ՀԷՔ ՂԼԱՆԱՐ  
ՄԵՂԻ ԱՅՍ ԱՌԻԹՈՎ:

ԽՈՆԱՐՏԱՐԱՐ ԱԻՏԻ ԽՆՂԸԷԻՆՔ ՈՐ ԲԱՐԵՏԱՃԷԻՔ ԿԱՆՈՒԽԷՆ ՄԵՂԻ  
ՏԵՂԻԱԿ ԱՎՏԵԼ ԹԷ ԿՐՆԱՔ ՂԱԼ. ԵԹԷ ՄԵՐ ԱՅՍ ԽՆՂԸՐԱՆՔՐ ՁԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԳՈՅԻՆ ԿԸ  
ՅԱՐՄԱՐԻ:

Մաղթե՛լով Ձեր ՍՐԲԱՂՆՈՒԹԵԱՆ ԱՌՈՂՉ ԱՐԵԼՉԱՏՈՒԹԻՒՆ,

Մատչե՛լով ի Տամբոյր Ձեր Ս. ԱՉՈՅ  
ՄՆԱՄՔ՝

ՈՐՂԻԱԿԱՆ ԱԻՐՈՎ ԵՆ յԱՐԳԱՆՔ

*Աւարդիս ԲՏՆՅ. Գաշգճեան*

ՍԱՐԳԻՍ ԲՏՆՅ. ԳԱՉՐԳՃԵԱՆ  
ՀՈՎԻԼ

*Աւարդիս Արևատեան*

ՍԵՂՈՒՏ ՄԻՆԱՍԵԱՆ  
ԱՌԵՆԱՎԵՍ  
ԴԱՐԱՅ ԴԱՍԻ

*Կառնապի*

ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ  
Ն. ՖԻԼԱՏԵԼՖԻԱ, ՓԱ.

Եկեղեցւոյ Հեռաձայն  
Մ.աճ՝ P Oplar 9-9230  
Հովիւի Գրասենեակ՝ P Oplar 3-6807

Տ. Սարգիս ԲՏՆՅ. Գաշըզճեան  
Հովիւ



S. W. Corner

Susquehanna Avenue & Marshall Street

Holy Trinity  
Armenian Apostolic Church

North Philadelphia 22, Pa.

CHURCH PHONES  
Hall: P Oplar 9-9230  
Pastor's office: P Oplar 3-6807

Rev. Sarkis Mushikjian  
PASTOR

Մայիս 16, 1961

Գերաշնորհ  
Տ. Սիոն Ս. Արք. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Նիւ Եորք

Սրբազան Հայր,

Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ Եփսոսական Խորհուրդը,  
Մայիս 28, 1961 -ի Կիրակին, ժամը 1.30-ին անդամական ընդհ. ժողովի կը հրահրէ  
Եկեղեցւոյ անդամները շատ կարեւոր հարցով մը, որը հետեւեալն է:

ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՅԱՏԱԿԱԳԵՒԻ ԻՒՐԱՑՈՒՄ ԵՒ ՀԱՒԱՏՈՒԹԻՒՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ  
ՍԿՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Բնականաբար այս նոր յատկազիծը պիտի ներկայացնենք Ձեզի առ ի վա-  
ւերացում:

Առ ի գիտութիւն Ձերդ Սրբազնութեան ուշադրութեան յանձնելով այս  
պարագան, կը խնդրենք Ձեր հայրական օրհնութիւնները եւ կը մաղթենք Ձեզ առողջ  
արեւշատութիւն:

Մատչեւով ի համբոյժ Ձեր Ս. Աջոյն  
Մ'ստ

Որդեական սիրով եւ ցարգանօք

*Սարգիս ԲՏՆՅ. Գաշըզճեան*

Սարգիս ԲՏՆՅ. Գաշըզճեան

Քիւ 1981  
Մարտ 10, 1981

Արժանաշնորհ  
Տ. Ասրգիս ՔՆՅ. Գաշրզնեան  
Հոգեւոր Հովիւ եւ Նախագահ Միական Խորհուրդի  
Ա. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Նորթ Եփեսոսի միջոցով

Սիրելի Տէր Հայր.

Ստացած ենք 1981, Փետրուար 26 թուակիր Ձեր տեղեկագիրը,  
որով կը հաղորդէ թէ Ձեր նախագահութեամբ՝ Յունուար 15ին գումար-  
ուած Միական ժողովը կառուարած է Միական Խորհուրդի մասնակի ընտրու-  
թիւն, եւ ներկայացնելով յաւանդութեան արգիւնքը, կը խնդրէ ըն-  
տրուած անձերուն վանքայման պաշտօնակիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Միական ժողովը տեղի ունեցած է  
Թեմական Գանձադրութեան արժանադրութեանց համաձայն, եւ ընտրուած  
անձերը, իբրեւ Եկեղեցւոյ նախնականներ ու նախնայ անդամներ, կը  
վայելեն Ձեր համայնքի ժողովուրդին վստահութիւնը, այսու կը վան-  
քայմենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին.-

- Տիարք՝ Ասրգիս Մանուկեան
- Արա Բարունակեան
- Յարիկ Անթառամեան
- Էնջ Գամառեան
- Տօրն Գուշեան
- Գլխաւոր Գալէնեան

Օրհնելով նորեմաքի անդամները՝ կը մաղթենք Ձեզի եւ պա-  
ուարեան Միական Խորհուրդի յաջող եւ արգիւնաւոր զարձանեցումներ,  
ի վաստ Աստուծոյ եւ ի պայծառութիւն Ա. Եկեղեցւոյ ու ի շինութիւն  
համայնքի Ձեր սիրեցեալ ժողովուրդին:


Մեամբ Տիրաւանդ սիրոյ ողջուելի  
Ազօթարար

ՍՈՒՆ ԱՐՔԵՎԻՍԿՈՍ  
Առաջնորդ Հայոց Եկեղեցւոյ

**ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ  
Ն. ՏԻԼԱՏԵԼԻԱ, ՓԱ.**

Եկեղեցւոյ Հեռաձայն  
Մ.ա.՝ P.O. 9-9230  
Հովիտի Գրասենեակ՝ P.O. 3-6807

**Տ. Սարգիս ԲՏՆՅ. Գաշըզեան  
Հովիտ**



S. W. Corner  
Susquehanna Avenue & Marshall Street

**Holy Trinity  
Armenian Apostolic Church**

North Philadelphia 22, Pa.

CHURCH PHONES  
Hall: P.O. 9-9230  
Pastor's office: P.O. 3-6807

**Rev. Sarkis Kashikjian  
PASTOR**

Հոկտ. 16, 1961

Գերաշնորհ  
Տ. Միոն Աբբ. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Արեւելեան Թեմի  
Նիւ Եորք:

Սրբազան Հայր,

Ս. Երրորդութիւն Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Տարեկան  
Ընդ. Անդամական-Նախապատրաստական-Ժողովը պիտի գումարուի, յառաջիկայ  
Նոյեմբեր ամսուն 5, 1961 ի Կիրակին, Ս. Պատարագէն անմիջապէս յետոյ:

Օրակարգի հարցերն են.

- 1.- Ընտրողական Յանձնախումբի՝ ընտրութիւն:
- 2.- Նոր եկեղեցւոյ շինութեան համար առնուելիք գործնական քայլեր:
- 3.- Անդամարշալի համար կատարուելիք գործեր:
- 4.- Նոր հարցեր:

Զեր Սրբազանութեան առ ի գիտութիւն տեղեկացնելով զայս, և  
Խնդրենք Ձեր հայրական օրհնութիւնները:

Մատչելով ի համբոյր Ձեր Ս. Աշոյն  
Մնամ

Որդեական սիրով եւ յարգանքով

*Աւարդի Բեկ. Գաշըզեան*

Սարգիս ԲՏՆՅ. Գաշըզեան  
Հոգեւոր Հովիտ



Թիւ 3224  
Նոյեմբեր 17, 1961

Մեծայարգ  
Տիար Պետրոս Սէմէրճեան  
Առնապետ Երևան խորհուրդի  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Նորթ Տիլատելիա.

Սիրելի Պրն. Սէմէրճեան,

Առաջնորդարանի տոմարներու արձանագրութեան համաձայն, Ձեր  
հոգեւոր հովիւ Արժանաշնորհ Տ. Սարգիս Զհնյ. Կաշրճեանի մեր թի-  
մին մէջ փոխադրութեան հաշւոյն մակաւին պարտական կը մնայ 800.00  
տուար:

Թեմական խորհուրդը իր վերջին նիստին մէջ նկատի առաւ այս  
պարագան եւ որոշեց յանձնարարել պատուարժան Երևան խորհուրդի,  
որպէս զի ընթացիկ տարին չլրացած վերոյիշեալ գումարը փոխանցէ  
Առաջնորդարան:


Լիայոյս ըլլալով որ Ձեր Երևան խորհուրդը մնացեալ սոյն  
հաշիւն ալ պիտի փակէ տրուած ժամանակին, ամենուր կը յայտնենք  
մեր հայրական օրհնութիւնները եւ կը մաղթենք Աստուային վարձատ-  
րութիւն:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
եւ օրհնութեամբ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ  
Ն. ՖԻԼԱՏԵԼՖԻԱ, ՓԱ.

Եկեղեցւոյ Հեռաձայն  
Միաս' POplar 9-9230  
Հովիտի Գրասենեակ' POplar 3-6807



Holy Trinity  
Armenian Apostolic Church  
North Philadelphia 22, Pa.

CHURCH PHONES  
Hall: POplar 9-9230  
Pastor's office: POplar 3-6807

S. W. Corner  
Susquehanna Avenue & Marshall Street

Փետր • 12, 1962

Գերաշնորհ  
Տօ՛Սիոն Սօ՛ւքքօ՛Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Նիւ Եորք

Մըբազան Հայր,

Սօ՛ւքքորդուծիւն Հայցօ Եկեղեցւոյ Դպրաց Դատին, Տարեդարձի  
Տօնակատարութիւնը եւ ճաշկերոյթը տեղի պիտի ունենայ, Կիրակի Մարտ 25, 1962օ  
Սօ՛Պատարագէն վերջ, Եկեղեցւոյս սրահին մէջ:

Ձեր բարեհաճ թելադրութեամբ, այս թուականը որոշեցինք, Ձեր  
գործերուն արգաւթ չըլլալու համար:

Կը փափաքինք, Սօ՛ Հայր, որ այդ շաբաթավերջին մեր համայնքին  
հիւրը ըլլաք, Սօ՛Պատարագ մատուցանէք, Ձեր Հայրական պատգամովեր հոգիները  
կազմուրէք եւ հանդիսութեանց նախագահէք:

Դպրաց Դատի անդամներ ունինք որոնք Դպիր չեն ձեռնադրուած  
եւ աղջիկներ որոնց քոզերը չեն օրհնուած, ուստի կը խնդրենք որ այս պարզան  
ձեր նկատողութեան առնէք եւ ձեռնադրութեան ՄԱՇՏՈՑԸ Ձեր հետ բերէք:

Մըբազան Հայր, հաճեցէք Ձեր ժամանման օրը եւ ժամը մեզի  
տեղեկացնել, որպէսզի կարենանք Ձեզի արժանի ընդունելութիւն կատարել:  
Մաղթելով Ձերը Մըբազնութեան առողջութիւն եւ բարի ժամանումօ

Մատչիմ ի համբոյր Ձեր Սօ՛ւքոյն  
Մնամ

Որդիական սիրով եւ Յարգանք

*Արշակունի Գրիգորյան*

Սարգիս ԳՏՆՅօ Գաշըզեան  
Հոգեւոր Հովիւ

Սօ՛ւքքորդուծիւն Հայցօ Եկեղեցւոյ  
Նորթ Ֆիլատելֆիո

*Արշակունի Գրիգորյան*

*Արշակունի Գրիգորյան*

Թիւ 4071  
Մարտ 8, 1962

Արժանաշնորհ  
Տ. Սարգիս ԶՀՆԵ Գաշթղճեան  
Հոգեւոր Հովիւ եւ Նախագահ Միական Խորհուրդի  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ,  
Նորթ ՏիւստէլՏիա.

Սիրելի Տէր Սարգիս,

Առաջած ինչ Միական Խորհուրդից Մարտ 11 Թուակիր Նամակը, որով կը խնդրեն Ապրիլ 1-ի մեր այցելութեան առթիւ, ձեր Եկեղեցւոյ Դպրատ Դասի անդամներուն զպրտութեան 4 աստիճաններ տանք եւ երկու դպիրներու ալ սարկաւազի ձեռնադրութիւն կատարենք:

Նախ դիտել կու տանք թէ իբրեւ Հոգեւոր Հովիւ եւ Նախագահ Միական Խորհուրդի, դուք պէտք է որ կատարէք պաշտօնական դիմումը Հաղորդելով Միական Խորհուրդի եւ Ձեր Խնդրանքը, ինչպէս նաեւ տեղեկութիւններ տայի՞ք սարկաւազութեան թեկնածու Եւստպ Միմասեանի մասին, նկատելով որ Տիրացու Թալար Գափազեան Առաջնորդարանի ուսանող է եւ մեզի ծանօթ:

Ներկակ Ձեզի կուղարկենք սարկաւազութեան թեկնածուներու Հարցարանէն երկու օրինակ եւ կը թեկադրենք որ քստ ալմա քննէք թեկնածուին ու մեզի Հաղորդէք Ձեր քննութեան արդիւնքը, որպէս զի կարելի ըլլայ ընթացք տալ Ձեր խնդրանքին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՄԻՈՆ ԱՐՁԵՂԻՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Ց.Գ. Ձեր Եկեղեցւոյ ճարտարագետը մեզմէ յտակազիծներ առած էր /Պոստոնի Եկեղեցւոյ/ ուսումնասիրելու համար, ու տակաւին չէ վերադարձուցած: Իրեն յիշեցուցէ՛ք որ անմիջապէս վերադարձնէ, որովհետեւ անհրաժեշտ պէտք ունինք անոնց:

Քի. 4108  
Մարտ 20, 1962

Արժանացնոր՝  
Ց. Սարգսի ճԵՆ, Գաշգճճճճ  
Հոգևոր Հոգի և Նախագահ Միակամ Խորհուրդի  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Նոր՝ Տիւանիճիս.

Արթիւ Տէր Սարգիս.

Ասացած ենք Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր  
Նախագահութեամբ՝ 1962, Փետրուար 25ին գումարուած Համայնքի  
Միակամ ժողովը կատարած է Միակամ Խորհուրդի մասնակի ընտրու-  
թիւն, և Ներկայացնելով թուարկութեան արդիւնքը, կը խնդրէ  
ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի աւնենալով որ Ձեր Միակամ ժողովը տեղի ունեցած  
է թեմական Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն, չէ ըն-  
տրուած անձերը, իբրև եկեղեցւոյ գորտաճանաչ ու նուիրեալ  
անդամներ, կը վայելին Ձեր Համայնքի ժողովուրդին վստահութիւնը,  
այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին.

- Տիար՝ Դեարոս Աւետիսեան
- Տաւադ Յարեան
- Գունիկ Թովմասեան
- Հէրրի Արթուրեան
- Արտէն Հանամիրեան


Կը յանձնարարենք որ առաջին անգամ Ազգայնագարան զըր-  
կէք Ձեր Միակամ Խորհուրդի նոր դիւանի կազմի անուն-հասցէները:

Օրհնելով Միակամ Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի  
և պատուարժան անդամներուն յաջող և արդիւնաւոր գործունէութիւն,  
ի վայնասութիւն Ս. Եկեղեցւոյ և ի շինութիւն Համայնքի մեր  
սրբեցեալ ժողովուրդին:

Մեամբ Տիրաւանդ սիրոյ ոգիւնով  
Ազոթարար

ՍՈՆ ԱՐՁԱԳԵՍԿՈՐՈՍ  
Ազգայնագար Հայոց Ամերիկայի

ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ  
 ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ  
 Ն. ՖԻԼԱՏՆԻՖԻԱ, ՓԱ.



Holy Trinity  
 Armenian Apostolic Church

North Philadelphia 22, Pa.

CHURCH PHONES

Hall: POplar 9-9230

Pastor's office: POplar 3-6807

Very Rev. Zaven Arzoumanian  
 Pastor

Եկեղեցւոյ Հեռաձայն  
 Մրահ՝ POplar 9-9230  
 Հովիւի Գրասենեակ՝ POplar 3-6807

Տ. Զաւեն Վրդ. Արզումանեան  
 Հոգեւոր Հովիւ

S. W. Corner

Susquehanna Avenue & Marshall Street

December 26, 1963

Սերեւե Նիսական,

Թեմիս Առաջնորդարանը ներթափառ և ապահով հիման վրայ պահելու համար հինգ տարի առաջ Երեսփոխանական Ժողովը որոշեց 50,000 տոլարի հիմնադրամ մը գոյացնել, որպէսզի ի հարկին գործածուի անյետաձգելի նպատակներու համար, պայմանաւ ասկայն որ փոխարինուած գումարը կրկին պահեստի գանձին վերադարձուի: Այս գումարը հայթայթելու համար ամէն համայնքի վրայ բաժին մը նշանակուեցաւ, իսկ մեր համայնքին բաժինը որոշուեցաւ 2500 տոլար, որուն մօտ 800 տոլարը մեր մաս մը անդամներուն մասնակցութեամբ արդէն գոյացած է և Առաջնորդարան դրկուած:

Արդ, նկատի ունենալով որ մեր համայնքները արդէն վաղուց իրենց վրայ դրուած պարտքը վճարած են և Առաջնորդարանի կողմէ քանիցս դիմում կատարուած է մեզի որ մենք եւս մասնակից ըլլանք և մեր պարտքը վճարենք, ասոյն գումարը գոյացնելու համար: Ուստի պիտի խնդրէիք Ձեզմէ որ երբ Ս. Եփրեմի օրը, Յունուարի 5ին, 1964, Եկեղեցի գաք, Եկեղեցւոյ մուտքին կեցող նշանակուած անձերուն յանձնէք Ձեր բաժինը: Իսկ եթէ բանաւոր պատճառաւ չկարենաք Եկեղեցի գալ, կրնաք Ձեր նուէրը յանձնել կամ ուղարկել Հոգաբարձութեան: Իսկ եթէ արդէն Ձեր մասնակցութիւնը բերած էք ասոյն հաշւոյն նկատմամբ, հաճեցէք ասոյն դիմումը աննկատ թողուլ:

Յարգանք Աղ. Թարար,  
 Յ. Եղեղեղեան  
 Յ. Պեպիրեան  
 Զաւեն Վրդ. Արզումանեան

Dear Members,


Five years ago the Diocesan Assembly decided to establish a \$50,000 Working Capital Fund by taxing each parish a designated amount, for the purpose of lending money to our various parishes as their respective needs arise.

Our contribution to this Fund was set at \$2,500. As of this date we have collected a total of \$800 which has been forwarded to the Diocese. In view of our receiving several requests from the Diocese to forward the balance of our quota and since most of the other parishes have forwarded their required amount, we respectfully request that if you have not as yet participated in this matter, that you kindly cooperate in this respect.

Sunday, January 5, 1964, as you come in to Church, our Diocesan Delegates will approach you for your contribution. If you have not given, kindly give your contribution to them at that time. If it is impossible for you to be present this Sunday, send your contribution. We ask that you give this request your kind consideration and that you be prepared to give your contribution this Sunday so that we can realize our full quota and close our account in this matter.

On behalf of the Diocesan Delegates  
 Ohannes R. Bebirian  
 Rev. Zaven Arzoumanian  
 Zaven Vartabed Arzoumanian

ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ  
Ն. ՖԻԼԱՏԵԼՖԻԱ, ՓԱ.



Holy Trinity  
Armenian Apostolic Church

North Philadelphia 22, Pa.

CHURCH PHONES  
Hall: POplar 9-9230  
Pastor's office: POplar 3-6807  
Very Rev. Zaven Arzumanyan  
Pastor

Եկեղեցւոյ Հեռաձայն  
Սրահ՝ POplar 9-9230  
Հովիւի Գրասենեակ՝ POplar 3-6807

Տ. Զաւէն Վրդ. Արզումանեան  
Հոգեւոր Հովիւ

S. W. Corner

Susquehanna Avenue & Marshall Street

Հոկտեմբեր 11, 1964

Գերաշնորհ

Տ. Սիոն Սրբ. Արքեպս. Մանուկեան,  
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Հիւս. Ամերիկայի,

Նիւ Եորք.

Գերաշնորհ եւ Սիրելի Սրբազան Հայր,

Սոյն նամակով կը փափաքիմ Ձերդ Սրբազնութեան յիշեցնել Հոկտեմբեր 25ին  
Ձեր մեր Կուրիին տալիք հովուական այցելութիւնը: Ներքիակ ծանուցագիրը  
կը բացատրէ օրուան յայտագիրը: Եկեղեցւոյս Հոգաբարձութիւնն ու այլ  
կազմակերպութիւնները անձկանօք կը սպասեն Ձեզի:

Այս առթիւ թոյլ տուէք ըսելու որ յայտնի փոփոխութիւն մը մտցուցինք  
օրուան յայտագրին մէջ Տիկնանց Միութեան խնդրանքով: Ինչպէս ըստած էր  
Ձեր Սրբազնութեան նոյն օրը Տիկնանց Միութեան յիսնամեայ յոբելեանը  
պիտի կատարուէր, որուն համար սակայն մեր տիկիները չափով չկարողացան  
հարկ եղած պատրաստութիւնները տեսնել. մեզմէ խնդրեցին որ յետաձգուի  
մինչեւ յառաջիկայ աշուն:

Ձեր տալիք այցելութիւնը պիտի զուգարիպի մեր անդամական ժողովին: Օրուան  
հանդիսաւոր Ս. Պատարագը Դուք պիտի բարեհաճիք մատուցանել, որմէ ետք ի  
պատիւ Առաջնորդ Սրբազան Հօր պիտի տրուի շաշկերոյթ. եւ ապա անդամական  
ժողով, որուն կարեւորագոյն հարցը դարձեալ նոր եկեղեցւոյ շինութեան  
խնդիրը պիտի ըլլայ: Այսքանը ըսեմ որ գործը բաւական գործնական ձեւ մը  
ստացած է. առնուելիք բոլոր մանրամասնութիւնները առնուած են եւ կը յուսանք  
որ Ձեր ներկայութեամբ մեր ժողովուրդը պիտի վճռէ գործի սկսիլ:


Ստացած եմ, Սրբազան Հայր, Ձեր վերջին նամակն ու երկտողը Գալիֆորնիայէ:  
Խնդրանքիս ընդառաջելով հաճած էիք դպրոցական նոր շրջանի ծախսերուն կար-  
գադրութիւնը ընել: Ձեր ստորագրած նամակը անյապաղ ծառայեց իր նպատակին:  
Այս առթիւ եւս կրկին անգամ ընդունեցէք սրտագին շնորհակալութիւններս:

Մտաչելով ի համբոյր ձեր Աջոյն,  
մնամ ազօթակից,

*Zaven Arzumanyan*  
Զաւէն Վրդ. Արզումանեան, Հովիւ

*Handwritten signature and initials*

ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ  
Ն. ՖԻԼԱՏՆԻՖԻԱ, ՓԱ.



Holy Trinity  
Armenian Apostolic Church

North Philadelphia 22, Pa.

CHURCH PHONES

Hall: POplor 9-9230

Pastor's office: POplor 3-6807

Very Rev. Zaven Arzoumanian  
Pastor

Եկեղեցւոյ Հեռաձայն  
Մրահ՝ POplor 9-9230  
Հովիտի Գրասենեակ՝ POplor 3-6807

Տ. Զաւէն Վրդ. Արզումանեան  
Հոգեւոր Հովիւ

S. W. Corner

Susquehanna Avenue & Marshall Street

*Handwritten signature: Յր. Խոսեհայր*

*Handwritten signature: ՄԻՍ*

Նոյեմբեր 11, 1964

Գերաշնորհ  
Տ. Սիրոն Սրբ. Արքեպս. Մանուկեան,  
Առաջնորդ Հայոց Հիւս. Ամերիկայի եւ  
Նախագահ Պատ. Թեմական Խորհուրդի

Նիւ Եորք

Գերաշնորհ եւ Սիրելի Սրբազան Հայր,

Այսու պաշտօնապէս և գրաւոր կերպով պարտք կը զգամ տեղեկացնել Ձեր Սրբազնութեան և Ձեր միջոցաւ Պատ. Թեմական Խորհուրդին թէ Դեկտեմբեր 1ին, 1964 Եռուխիս Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ շէնքը -2160 Նորթ Մար- շըԷ փողոցի վրայ- հրկիզուեցաւ ամբողջովին ու քանդուեցաւ: Կորսու- ցուցինք գրեթէ ամէն ինչ, բացի գրասենեակի արձանագրութիւններէն ու տոմարներէն, որոնցմէ կարելոր մաս մը կարողացանք փրկել:

Նոյն օրն իսկ հեռաձայնով հաղորդեցի Ձեր Սրբազնութեան այս դժբախտ Լուրը և օր մը ետք անձամբ եկայ մանրամասնութիւնները հաղորդելու: Այսօր եղածին վրայ որոշ բան մը աւելցնելու ի վիճակի չեմք տակաւին: Յոյս ունինք որ ապահովագրութեան ընկերութիւնը ամէն շանք պիտի թափէ մեր ունեցած կորուստը հատուցանելու: Խուզարկութիւն և քննութիւն տա- կաւին կը շարունակուին: Հրկիզման օրն իսկ գումարեցինք վարչական բա- ցառիկ ժողով մը ուր առինք անմիջական որոշումներ կիրակնօրեայ պաշտա- մունքներու կապակցութեամբ: Ստացանք ցաւակցական կարգ մը նամակներ քա- ղաքիս օտար եկեղեցիներէն: Ունեցանք նաեւ թոյր Ա. Սահակ-Մեսրոպ եկե- ղեցւոյ Հովիւին ու Հոգաբարձութեան հրաւերը միանալու իրենց պաշտամունքին:

Անցեալ Կիրակի, Դեկտ. 6ին, կիրակնօրեայ պաշտամունքը կատարեցինք Ուեստ Ֆիլատելֆիոյ մեր համայնքին հետ միասին: Այս Կիրակի, Դեկտ. 13ին Ս. Պատարագ պիտի մատուցանենք առօրեայ դպրոցի մը սրահին մէջ, քաղաքիս Կրթական Խորհուրդի բացառիկ արտօնութեամբ: Իսկ յառաջիկայ կիրակիէն սկըս- եալ պիտի կարողանանք չգործածուող մատուռի մը մէջ ունենալ մեր պաշ- տամունքները մինչեւ մեր նոր շէնքերուն կառուցումը: Բաց աստի, ուրախ ենք և գոնէ միխթարուած, որ մեր նոր շէնքերու կառուցման աշխատանքները Լաւ ընթացքի մէջ են, որոնց համար շուտով պիտի դիմենք Պատ. Թեմական Խորհուրդի վաւերացնելու համար մեր ծրագիրը:

Հայցելով Աստուծոյ օգնականութիւնը կը մատչիմ ձեր Աջին որդիական սիրով աղօթակից,

*Handwritten signature: Zaven Arzoumanian*  
Զաւէն Վրդ. Արզումանեան, Հովիւ

Թիւ 11689  
Յունուար 7, 1965

Հոգեշնորհ  
Տ. Զաւէն Կրդ. Արզումանեան  
Հոգեւոր Հոգիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
եւ Նախագահ Պատուարժան Միական Խորհուրդի  
Նորթ Ֆիլատելիա.

Սիրելի Հայր Զաւէն.

Ստացած ենք Ձեր Նոյ. 24 եւ Դեկտ. 11 եւ 16, 1964 թուակիր նամակները, որոնցմէ առաջինով մեզի գրաւոր կը հաղորդէիք այն ցաւալի շուրջ. թէ Դեկտ. 1ին Ձեր Ս. Երրորդութիւն եկեղեցին Հրոյ ճարակ եղաւ ամբողջովին եւ այրեցան բոլոր գոյացքն ու սպասները: Ինչպէս հեռախօսով եւ անձամբ Ձեզի յայտնած էինք, այսու գրաւոր ալ կը հաղորդենք մեր եւ Պատ. Թեմական Խորհուրդի խորունկ ցաւակցութիւնը Ձեզի, Միական Խորհուրդին եւ Ձեր բարեպաշտ համայնքին այս մեծ աղէտին եւ կորուստին համար:

Պատուարժան Թեմական Խորհուրդը իր Դեկտ. 17ի նիստին մէջ լսեց եւ նկատի առաւ Ձեր նամակները եւ այսու, պաշտօնատէս Ձեզի կը հաղորդենք Թեմական Խորհուրդի որոշումը, որով կը վաւերացնէ Ձեր եկեղեցւոյ շինութեան ծրագիրը: Ըսաւ Ձեր մեզի հաղորդած տեղեկութեան շինութեան ընդհանուր ծախսը պիտի ըլլայ շորս հարիւր հազար տոլար: Երեք հարւը քսաննուհինգ հազար տոլար պիտի ծախսուի հայկական ոճով եկեղեցիի եւ անոր ներքնայարկի շինութեան: Իսկ առանձին սրահը, որուն ծախս կը նախատեսուի 75.000 տոլար, պիտի շինէք երբոր աւարտած ըլլաք եկեղեցին իր ներքնացրահով միասին:

Ինչպէս մեզի հաղորդած էք, զոհ ենք որ առժամայ կարգադրութիւն ըրած էք, գտնելով յարմար շէնք մը գործածելու Ձեր համայնքի Հոգեւոր եւ Թիական պետքերուն համար: Այս առթիւ, կ'ուզենք Ձեզի եւ Պատուարժան Միական Խորհուրդին յայտնել թէ որեւէ տեսակով Առաջնորդարանը պատրաստակամ է օժանդակելու Ձեզի հայթայթելով կրօնական գիրքեր եւ սպասներ:

Ուստի, նկատի ունենալով Ձեր համայնքի այս կացութիւնը, մեր եւ Թեմական Խորհուրդի փափաքն է որ շուտով սկսիք նոր եկեղեցւոյ շինութեան գործին, որպէսզի կարելի ըլլայ Նորթ Ֆիլատելիայ մեր ժողովուրդը համախմբել Հայ Եկեղեցւոյ հոսնիին տակ:


Մաղթելով Ձեզի կարողութիւն եւ յաջողութիւն Ձեր եկեղեցաշինական աշխատանքներուն մէջ.

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՄԻՈՆ ԱՐՔԵՊՈՍԿՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամբրիկայի  
եւ Կանադայի



ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ  
Ն. ՖԻԼԱՏՆԻՖԻԱ, ՓԱ.



Holy Trinity  
Armenian Apostolic Church  
North Philadelphia 22, Pa.

Եկեղեցւոյ Հեռաձայն  
Մրահ՝ POplar 9-9230  
Հովիւի Կրասնենակ՝ POplar 3-6807

CHURCH PHONES  
Hall: POplar 9-9230  
Pastor's office: POplar 3-6807  
Very Rev. Zaven Arzoumanian  
Pastor

Տ. Զաւէն Վրդ. Արզումանեան  
Հոգեւոր Հովիւ

S. W. Corner

Susquehanna Avenue & Marshall Street

Յունուար 12, 1965

Գերաշնորհ  
Տ. Սիոն Սրբ. Արքեպս. Մանուկեան,  
Առաջնորդ Հայոց Հիւս. Ամերիկայի,

Նիւ Եորք

Գերաշնորհ եւ Սիրելի Սրբազան Հայր,

Շնորհակալութեամբ ստացած ենք Ձեր Յունուար 7 թուակիր նամակը եւ հաղորդ դարձած Ձեր բարի զգացումներուն եւ բարեմաղթանքներուն մեր կրած դժբախտ աղէտին առիթով: Ուրախութեամբ իմացանք նոյն նամակէն Պատ. Թեմական խորհուրդի տուած վաւերացումի որոշումը մեր կառուցանելիք Հայ Եկեղեցւոյ շէնքի ու ներքնասրահի, որոնց աշխատանքները շատ շուտով պիտի սկսին:

Այս առիթով պիտի խնդրէի Ձերը Սրբազնութենէն, յանուն Եկեղեցւոյ խորհուրդի եւ Շինութեան Յանձնախումբի յայտնել մեր շնորհակալութիւնը Պատ. Թեմական խորհուրդի: Ինչպէս նախապէս հաղորդած էի Ձեզի մեր հողի օրհնութիւնը տեղի պիտի ունենայ Կիրակի Յունուար 31ին: Նկատելով որ Ձեր ներկայութիւնը կարելի պիտի չլլայ մեր փափաքն է որ Եղի շէնքը Սուրբը փոխանորդէ Ձեզ եւ մեր հետ լլայ այդ օր: Իր հետ համաձայնած ենք եւ պաշտօնապէս գրած իրեն: Հաճեցէք Դուք եւս նկատի ունենալ սոյն պարագան:

Ձեր արտօնութեամբ շնորհակալութեամբ ստացած ենք մեզի հարկ եղած ծիսական մատենները, որոնց համար կարծեմ փոխարժէք պիտի չհատուցանենք: Մէկ երկու գիրքեր եւս կը պակսին, զանոնք եւս կը յուսամ ունենալ:

Մեր Եկեղեցական պաշտամունքներն ու համաժողովին գործերը իրենց բնականոն ընթացքը գտան բարեբախտաբար: Ունեցանք շատ յարմար աղօթավայր մը, Կիրակնօրեայ դպրոցի համեստ յարմարութիւններով, ինչպէս նաեւ հովիւի գրասենեակ մը նոյն շէնքին մէջ. բախտաւոր է ինք այս բարի մարդոց հանդիպելով: Ճրագալոյցի եւ Ս. Եննիեան արարողութիւնները իրենց ցատուկ հանդիսաւորութեամբ կատարեցինք ի միջնորդութիւն եւ ի քաջալերութիւն մեր հաւատացեալներուն: Ձեր վերոյիշեալ նամակը հաւանաբար կարդամ մեր ժողովուրդին յառաջիկայ Կիրակի:

Կրկին շնորհակալութիւններով կը մաղթեմ Ձեր Սրբազնութեան առողջութիւն եւ կարողութիւն մատչելով ի համբոյր Ձեր Աջին,

*Zaven Arzoumanian*  
Զաւէն Վրդ. Արզումանեան, Հովիւ

Թի. 11901  
Ապրիլ 21, 1965

Հոգեշնորհ  
Տ. Զաւեն Լրգ. Իրգումանեան  
Հոգեւոր Հոգիւ Ս. Սրբաբազումեան Սկզբնցւոյ  
եւ Նախագահ Գառնաթիւն Սիական Խորհուրդի  
Նորձ Թիւտեւիքիւ.

Սիրելի Հայր Զաւեն,

Սոսցան ենք ձեր 1963 Ապրիլ 12 Թուակիր տեղեկագրէր, որով կը  
տեղեկացնէր թէ ձեր "Նախագահութեամբ" Ապրիլ 9ին գումարուած ձեր Տա-  
րեկան Սիական ժողովին ժէշ կատարուած է Սիական Խորհուրդի մասնակի  
ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէ  
ընտրուած աններուս վաւերացման գաշտեալագրէր:

Նպատի ունենալով որ ձեր ժողովը տեղի ուննցած է Թմական Կա-  
նանդրութեան արժանապատեան համաձայն, եւ ընտրութիւնը կատարուած է  
ստորինի, այսու կը վաւերացնենք հետեւեալ ներքէն իբրեւ անդամ Սիական  
Խորհուրդի.

- Տիգրէս Կեւորտ Կուսնազեան
- Սարգիս Կեւորտեան
- Արա Կարաւեպեան
- Կարգան Բարսեղեան
- Բազըրթ Տէմիրճեան
- Բոյ Օրտարեան

Կը յանձնարարենք որ ձեր տարեկան հաշուեկշիռը եւ Սիական  
Խորհուրդի նոր Գիւանի անու-հարցէնեքը Խաշնարդարան ղրկէ շուտով:

Այսու, օրհնելով Սիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք  
Ձեզի եւ ձեր գաշտեալիցներուն յաշող եւ արդիւնաւոր գործունէութեան  
տարի մը, ի պայծառութիւն Ս. Սկզբնցւոյ եւ ի Հոգեւոր շինութիւն  
համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մեամբ Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Ազօթարար

ՍՈՒՆ ԱՐՄԵՆԻԱՆՈՐՈՍ  
Մոացնորդ Հայր Ամերիկայի  
եւ հանատայի

ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ  
Ն. ՖԻԼԱՏԵԼՅԻԱ, ՓԱ.



Holy Trinity  
Armenian Apostolic Church

Տ. Զաւէն Վրդ. Արզումանեան  
Հոգեւոր Հովիւ

CA 4-7444 (Church)  
RA 5-6999 (Res.)  
Very Rev. Zaven Arzoumanian  
Pastor

Home For Orphans of Odd Fellows  
6421 Ogontz Ave., Phila. Pa. 19126

Մայիս 21, 1965

Գերաշնորհ  
Տ. Սիրոն Սրբ. Արքեպս. Մանուկեան,  
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Հիւս. Ամերիկայի և Գանատայի,

Կիւ Երբ.

Գերաշնորհ եւ Սիրելի Սրբազան Հայր,

Կախապէս եղած կարգադրութեան մը համաձայն Յունիս 6ի Կիրակին  
ալահովուած էր որ մեզի հետ ըլլաք նորաշէն եկեղեցւոյ հիմնարկէքին  
համար: Անցեալները բերանացի կ'կերպով հաղորդեցի Ձեր Սրբազան  
թեան թէ կարելի պիտի չըլլար սոյն թուականին պատրաստ ունենալ  
շինարարութեան անհրաժեշտ մասը ունենալու համար հիմնարկէքի արար-  
ըողութիւնը:

Հետեւաբար կը փախաբէի գրաւոր հաստատել ըսածս, թէ Յունիսի 6ը շատ  
կանուխ կը թուի ըլլալ հիմնարկէքի համար: Հաճեցէք հետեւաբար ազատ  
ունենալ այդ Կիրակին: Հաւանական կը թուի թէ շինութեանց առաջին  
յարկը -պէյսմընդ- լրացած կ'ըլլայ ամառուան ընթացքին: Անշուշտ Ձեր  
Սրբազանութեան ճշգրիտ թուականը կը հաղորդենք երբ մենք գիտնանք  
զայն:

Շնորհակալութեամբ և մտախեղով ի համբոյր Ձեր Աշին  
աղօթարար,

*Zaven Arzoumanian*

Զաւէն Վրդ. Արզումանեան, Հովիւ

ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ  
Ն. ՖԻԼԱՏԵԼՖԻԱ, ՓԱ.



Holy Trinity  
Armenian Apostolic Church

Տ. Զաւէն Վրդ. Արզումանեան  
Հոգեւոր Հովիւ

CA 4-7444 (Church)  
RA 5-6999 (Res.)  
Very Rev. Zaven Arzoumanian  
Pastor

Home For Orphans of Odd Fellows  
6421 Ogontz Ave., Phila. Pa. 19126

Թուիս 25, 1965

Գերաշնորհ  
Տ. Միոն Սրբ. Արքեպս. Մանուկեան,  
Առաջնորդ Հայոց Հիւս. Ամերիկայի և Գանատայի,

Կնէ Երբ

Գերաշնորհ և Մերեւի Սրբազան Հայր,

Հոգաբարձութեանս մեկ խնդրանքը կը փախաքիմ ներկայացնել:  
Կլատեւոյ որ մեր նախկին եկեղեցւոյ հրկիզման հետեւանքով բազմա-  
թիւ եկեղեցական արժեքաւոր սպասներ կորսնցուցինք, ի միջի այլոց  
հովիւին վարդապետի. ակնակուռ Լանջախաչն ու եկեղեցւոյ ձեռաց  
խաչը,

Կլատեւոյ նաեւ որ Սմեայն Հայոց Վեհափառ Հայրապետը 1958ի աշ-  
նան Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ վարդապետական աստիճան ստանա-  
լուս առիթով շնորհած էր Լանջախաչ կրեւոյ իրաւունք եւ տուած էր  
խաչ մը, խնդրանքովը Եթովպահայ Գաղութային Ժողովի,

Եւ Կլատեւոյ որ մեր հոգաբարձական կազմէն Պրն. Հերբի Միլիճանեան  
տասը օրէն Ս. Էջմիածնի ուստի կերթայ,

Հոգաբարձութեանս փախաքը եղաւ Վեհափառ Հայրապետէն խնդրել որ մեր  
եկեղեցւոյ համար Պրն. Միլիճանեանին հետ ղրկէ վարդպ. Լանջախաչ մը  
եւ ձեռաց խաչ մը, որուն փոխարժեքը դոնէ որպէս նուէր մեր կազմը  
կը փախաքի տալ Ս. Էջմիածնի հիմնադրամին որ ի սլահ ղրուած է Ձեր մօտ:

Հետեւաբար, իմ կարծիքս այն եղաւ որ Առաջնորդ Սրբազանը հարկ եղած  
միջնորդութիւնը ընելու է Վեհափառ Հայրապետին մօտ բացատրելով վերո-  
յիշեալ պարագաները: Եթէ կը հաճիք ուրեմն նամակով մը բացատրել Նորին  
Ս. Օձութեան, որ երբ մեր ներկայացուցիչը մօտենայ Հայրապետին կարե-  
նայ տեղեակ ըլլալ սոյն պարագայէն: Թերեւս Ձեր գրեւիք նամակին օրի-  
նակն ալ մեզի ղրկէք որ ձեռքը տանք Հերբին:

Կանխայայտ շնորհակալութիւններով կը մատչիմ Ձեր Աջին  
Աղօթակցութեամբ

Զաւէն Վրդ. Արզումանեան, Հովիւ



*Մանի*

**St. James Armenian Church**

816 CLARK STREET  
EVANSTON, ILLINOIS

TELEPHONE: 864-6263

Յուլիս 14, 1965  
Էվանսթըն

Բարձր\*  
Տ.Սիոն Ս.Արքեպս.Մանուկեան  
Բարեջան Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Թեմին  
Նիւ Եորք, Միացեալ Նահանգներ\*

Բարձր\*Առաջնորդ Սրբազան Հայր,

Սեպտեմբեր 10-ը տիկնանց միութեան վարչութիւնը կը փափաքի որ յուլիս 27, 1965 ին Ս.Պատարագ մատուցանէք եւ բանին կենաց քարոզութեամբ միմիջեք մերազն հաւատացեալները: Եւ նաեւ պիտի կատարենք հոգեհանգստեան պաշտօն միութեան անդարձ անդամուհիներու հոգևոցն ի հանգիստ: Յետ Սրբազան արարողութիւններուն ճաշ եւ յայտադիր պիտի ունենանք եկեղեցւոյ սրահին մէջ ի պատիւ տիկնանց միութեան անդամուհիներու, որոնք տարիներէ ի վեր իրենց ոյժերու սահմանին մէջ միշտ օգտակար եղած են Սեպտեմբերին: Այս պատեհ առիթով կը փափաքինք որ Դուք հաճիք անոնց նուիրել մէյմէկ Ս.Խաչեր յանդամուհիներու թիւը 20, եթէ չունինք մենք գնենք բայց հայկական ոճով չենք կրնար որպէս վարձրատրութիւն իրենց տարիներու ծառայութեան եւ ի գնահատութիւն Թեմիս Հոգեւոր Պետէն:

Ձեր յուլիս 27 են մինչեւ յուլիս 4 ի մեր շրջանները այցելութեան թուականները կը պատրաստեմ ըստ Ձերոյ նիւ Եորքի հրահանգին: Եւ կ'ուզեմ հոս յիշել թէ յուլիս 27 ի մեր եկեղեցւոյ ճաշկերոյթէն յետոյ նոյն օրուայ երեկոյեան հրաւիրուած էք եկեղեցւոյ հոգաբարձութեան կողմէ կրկին ընտանեկան հաւաքոյթի:

Իսկ անցեալ շաբաթ յուլիս 12, 1965 ին վէսթփոլմընի մէջ ունեցայ հոգաբարձական ժողով եւ այս չորեքշաբթի յուլիս 16, 1965 ին, երեկոյեան ժամը 7:30 պիտի գայ ճարտարապետը եւ ստորագրէ եկեղեցւոյ պայմանագրութիւնը: Եւ անմիջապէս պիտի սկսինք գործի: Նոր եկեղեցւոյ հողի օրհնութիւնը կատարեցի մայիս 30, 1965 ին յետ Ս.Պատարագի:

Վէսթփոլմընի հոգաբարձութիւնը սիրով եւ ուրախութեամբ ընդունեց ուրարակիր մանուկ երլմագեանի, որպէսզի ան ամէն շաբաթ առաւօտեան ժամեր-գութիւն կատարէ եւ ամէն մարզի մէջ օգտակար ըլլայ իրենց, ենթակայ ըլլալով իմ հսկողութեան, եւ ես ամիսը անգամ մը Ս.Պատարագ պիտի մատուցանեմ ըստ ձերոյ Սրբազնութեան հրահանգին ու կարգադրութիւնը կը մնայ ի զօրու մինչեւ Սրբազնութեանը նոր տնօրինութեան:

Վերոյիշեալները Ձերոյ Սրբազնութեան ներկայացնելու Սպասելով պատասխանիս, մնամ որդիական յարգանքով

*Լ.Տ. Գլ. Սրբազան*

ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ  
Ն. ՖԻԼԱՏՆԻՅԻՄ, ՓԱ.



Holy Trinity  
Armenian Apostolic Church

Տ. Զաւէն Վրդ. Արզումանեան  
Հոգեւոր Հովիւ

CA 4-7444 (Church)  
RA 5-6999 (Res.)  
Very Rev. Zaven Arzumanyan  
Pastor

Home For Orphans of Odd Fellows  
6421 Ogontz Ave., Phila. Pa. 19126

ՅՈՒԼԻՍ 21, 1965

Գերաշնորհ  
Տ. Սիրոն Սրբ. Արքեպս. Մանուկեան,  
Առաջնորդ Հայոց Հիւս. Ամերիկայի և Գանատայի,

Նիւ Եորք

Գերաշնորհ և Սիրելի Սրբազան Հայր,

Երեկոսան մեր Երևական հերթական ժողովին մեր նոր եկեղեցւոյ Հիմնարկէքի արարողութեան թուականը անգամ մը եւս նկատի առնուեցաւ: Հարկ տեսնուեցաւ իսկոյն հեռաձայնել Ձերը Սրբազանութեան տեսնելու համար կարելիութիւնը երկու շաբաթով զայն յետաձգելու: Գլխաւոր պատճառը շինութեանց աշխատանքներու քիչ մը դանդաղ յառաջացումը նկատուեցաւ:

Ձեր Սրբազանութիւնը յարմար գտած է թէ ի հարկին Սեպտեմբեր 26ի կիրակին կարելի է ունենալ Հիմնարկէքը, քանի որ նոյն օրը տակաւին բաց է Ձեր օրացոյցին վրայ: Ժողովականներ ուրախութեամբ արձանագրեցին սոյն պարագան և խնդրեցին ինծմէ որ գրեմ Ձեզի որպէսզի զայն հաստատէք եթէ հարկ կը տեսնէք:

Գիչ առաջ գացի և տեսայ թէ շինութեանց գործը բաւական յառաջացած է. կարելի է երեւակայութեամբ տեսնել թէ հոն բարձրանալիք Հայոց Եկեղեցին իսկական կոթող մը պիտի ըլլայ մեր գաղութին համար: Ժողովական անդամներ մանրամասնութեամբ տեղեկացան կատարուելիք աշխատանքներու մասին. ես ալ տուի Ձեր Սրբազանութեան տուած ուղղութիւնները:

Կը մատչիմ Ձեր Աշին Լաւագոյն մաղթանքներով,

Աղօթակից,  
*Zaven Arzumanyan*  
Զաւէն Վրդ. Արզումանեան, Հովիւ

ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ  
Ն. ՖԻԼԱՏՆՆԻՍ, ՓԱ.



Holy Trinity  
Armenian Apostolic Church

Տ. Զաւէն Վրդ. Արզումանեան  
Հոգեւոր Հովիւ

CA 4-7444 (Church)  
RA 5-6999 (Res.)  
Very Rev. Zaven Arzoumanian  
Pastor

Home For Orphans of Odd Fellows  
6421 Ogontz Ave., Phila. Pa. 19126

Սեպտեմբեր 16, 1965

Գերաշնորհ

Տ. Սիրոն Սրբ. Արքեպս. Մանուկեան,  
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Հիւս. Ամերիկայի,

Նիւ Եորք

Գերաշնորհ եւ Սիրելի Սրբազան Հայր,

Յառաջիկայ Կիրակի Սեպտեմբերի 26ին տեղի կ'ոնենայ մեր նորակերտ եկեղեցւոյ հիմնարկէքի արարողութիւնը ձեռամբ Ձեր Սրբազնութեան: Նախապատրաստական աշխատանքները կը տարուին կանոնաւորաբար: Կը սպասենք Ձեր ժամանումի թուականի ու ժամու մասին:

Մեր փափաքն է որ Ձեր Սրբազնութիւնը ըլլայ օրուան պատարագիչը. այս պարագան յստակօրէն չէի յայտնած խորհելով որ արդէն բնականօրէն կը հասկցուէր. շատ ուրախ պիտի ըլլանք եթէ օրուան պատարագիչն ու քարոզիչը ըլլաք: Անշուշտ կը յիշէք մեր համեստ պայմանները որոնց ներքեւ անցնող Ենոնդէն ի վեր մեր եկեղեցական պաշտամունքները կուսենանք մեր ժամանակաւոր մատուռին մէջ. հոն է որ պիտի պատարագէք: Դսկ եթէ Ձեր փափաքն ըլլայ որ Դուք նախագահէք ու քարոզէք միայն, այն ալ Ձեր կարգադրութեան կը թողունք. այս պարագային դարձեալ Ձեր պատարագիչի Լրիւ զգեստաւորումին պէտք պիտի ունենանք հիմնարկէքի արարողութեան համար, այնպէս որ երկու պարագաներուն ալ Ձեր հետ ունենալու էք:

Բաց աստի, Սրբազան Հայր, կը խորհիմ թէ ճաշկերոյթի վերջաւորութեան Ձեր կողմէ յատուկ գնահատանքի արժանանալու են հետեւեալ չորս անձերը իրենց կատարած շնորհակալ գործին համար. եթէ Ձեր հետ բերէք Առաջնորդարանի արժեքաւոր զարդակոճակներէն թերեւս պատշաճ ըլլայ այդ ձեւով վարձատրել զիրենք: Անոնք են. — Պրնք. Ջէք Կուշեան, փաստաբան, որ շատ գնահատելի գործ կատարեց օրինական գետնի վրայ: Սուրբ Բարեջանեան, Շինթ. Յնճնխ. Ս. պետը, Սարգիս Մանուկեան Երկ. Ս. պետը, եւ Աւետիս Մուրադեան, գլխաւոր ուժը մեր Շինթ. Յնճնխութիւն: Անշուշտ իրենք տեղեակ չեն այս մասին, առաջին անգամն է որ միայն Ձեզի կը յայտնեմ այս պարագան:

Սպասելով Ձեր բարի գալստեան կը մատչիմ Ձեր Աջին

Առթակեց,

Zaven Arzoumanian  
Զաւէն Վրդ. Արզումանեան, Հովիւ

Քիւ 12151  
Նոյեմբեր 12, 1965

Հոգեշնորհ  
Տ. Զաւէն վրդ. Արզումանեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Նորթաթիւզանքի ֆիլիալի ծխական Խորհուրդի  
Նորթ ֆիլիալի ֆիլ.

Սիրելի Հայր Զաւէն,

Այսու կը յայտնենք թէ Ձեր համայնքի երեք պատգամաւորներու  
պաշտօնավարութեան շրջանը լրացած է, եւ պէտք է նոր պատգամաւոր-  
ներու ընտրութիւն կատարէք:

Կը յանձնարարենք որ Ձեր նորընտիր պատգամաւորներու անուն-  
հասցէները Առաջնորդարան ղրկէք ամենէն ուշը Փետրուարի վերջը, որ-  
պէս զի կարելի ըլլայ զիրենք հրահրել Թեմական Գաղափարական  
ժողովին եւ իրենց ղրկել Թեմական Խորհուրդի տարեկան սեղեկագիրը:


Առաջնորդարանի Դիւանը պիտի կատարէ պատգամաւորներու ստու-  
գումը, հետեւաբար, կը թելադրենք որ Ձեր եւ ծխական Խորհուրդի ա-  
տենագետի եւ ատենադպիրի կողմէ ստորագրուած պատգամաւորներուն  
ինքնութիւնը հաստատող վկայագիրը ղրկէք Առաջնորդարան:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Գանատայի



ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ  
Ն. ՖԻԼԱՏԵԼՅԻԱ, ՓԱ.



Holy Trinity  
Armenian Apostolic Church

Տ. Զաւէն Վրդ. Արզումանեան  
Հոգեւոր Հովիւ

CA 4-7444 (Church)  
RA 5-6999 (Res.)  
Very Rev. Zaven Arzoumanian  
Pastor

Home For Orphans of Odd Fellows  
6421 Ogontz Ave., Phila. Pa. 19126

Դեկտեմբեր 29, 1965

Գերաշնորհ

Տ. Սիոն Սրբ. Արքեպս. Մանուկեան,  
Առաջնորդ Հայոց Հիւս. Ամերիկայի եւ Գանատայի,

Նիւ Եորք

Գերաշնորհ եւ Սիրելի Սրբազան Հայր,

Կոր Տարուան եւ Սուրբ Եննդեան ուրախ առիթներով, յանուն  
Եկեղեցւոյս Հովիւին, Հոգաբարձութեան, կազմակերպութիւններուն եւ  
հաւատացեալներուն կը մատչիմ Ձեր Աջին շնորհաւորելով Ձեզ եւ մարթե-  
ւով որ Կոր Տարին բանայ Ձեր առջեւ առողջութեամբ եւ յաջողութեամբ  
յուսատու տարի մը եւս:

Այս առիւ տամ նաեւ աւետիս մը, Սրբազան Հայր: Կը նա-  
խատեսենք մեր նոր եկեղեցւոյ օժումը կատարել ՄԱՐՏԻ 26-27 էն,  
Մեծ Պահոց Գալստեան Կիւրակէին, որպէսզի կարելի ըլլայ մեզի համար  
Երզնկաբերդի, Աւագ Շաբթուան եւ Ս. Զատիկ օրերը տօնել նոր եկեղեցւոյ  
մէջ: Թեւեւ պէտք է ըսեմ որ այս թուականի վերջնական ըլլալու մասին  
Ձեզի կարող պիտի ըլլամ գրել Յունի. 15ին: Մական մեծ յոյս ունինք  
եւ 'Պիւտր' ալ կը ջանայ հասցնել ակնկալուած թուականին, ինք էր  
վերջնական խօսքը պիտի տայ ի մօտոյ: Այսուհանդերձ կը խնդրենք Ձեզմէ  
որ Ձեր յարաջիկայ Մարտի ժամանակացոյցը ըստ այսմ պատրաստէք ու մեզի  
համար ապահովէք 1966ի ՄԱՐՏԻ 26 եւ 27 օրերը:

Յանուն ինչական Խորհուրդի պիտի խնդրէի Ձեր Սրբազանութենէն  
նաեւ որ կարելի փութով այս ուրախ տեղեկութիւնը հասցնէիք նաեւ Ամե-  
նայն Հայոց վեհ. կաթողիկոսին, Ձեր կարգին խնդրելով նորին Սրբութենէն  
սրբատառ յատուկ կոնդակ մը Եկեղեցւոյս օժման առիթով, ինչպէս սովորա-  
բար կ'ըլլայ: Այս խնդրանքին կ'ընաք անմիջապէս ընթացք տալ առանց սպասե-  
լու իմ յաջորդ նամակիս: Անշուշտ Ձեր ողջոյնի եւ օրհնութեան գիրն ալ  
պատե՛հ առիթով կը հասցնէք:

Հետեւաբար, վերոյիշեալ թուականը գրեթէ վերջնական է. սակայն  
եթէ օդերու պատճառաւ անակնկալ փոփոխութիւն մը կ'ընէ Ձեզ անմիջապէս  
կը տեղեկացնենք:

Շնորհակալութեամբ եւ բարեմաղթանքներով կը մատչիմ Ձեր Աջին  
Առօթակցութեամբ,

*Zaven Arzoumanian*  
Զաւէն Վրդ. Արզումանեան, Հովիւ

Յիսնամեակ Սպրիւեան Հայ Կահատակաց  
Fiftieth Anniversary of the Armenian Martyrs  
1915-1965

Թիւ 12224  
Պետեմբեր 21, 1965

Հոգեշնորհ  
Տ. Զաւէն Վրդ. Արզումանեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ  
եւ Նախագահ Պատուարժան Ժիական Խորհուրդի  
Նորթ Ֆիլաժելիա.

Սիրելի Հայր Զաւէն,

Այսու կը յայտնեմք թէ Թեմական Խորհուրդը իր Դեկտեմբեր 16ի  
Նիստին մէջ, Նկատի առնելով յանուն Պատուարժան Ժիական Խորհուրդի  
Ձեր համայնքի իրաւարան Դոն. Գուշեանի ներկայցուցած բերանացի այն  
խնդրանքը թէ պէտք է Ձեր եկեղեցւոյ կալուածական թուղթերը (Տիտս  
էնտ Թայթրլս) փոխանցուին Ձեր եկեղեցւոյ անունին, որպէս զի կարելի  
ըլլայ մորթկէյմ առնել Ձեր նոր եկեղեցւոյ շինութեան համար, առաւ  
հետեւեալ որոշումը,

"Լիազօրել Թեմական Խորհուրդի Ատենապետը, Ատենադպիրը կամ  
Քանձապահը, կամ իւրաքանչիւրը առանձնապէս, որպէս զի Նորթ Ֆիլա-  
ժելիայի Ս. Երրորդութիւն եկեղեցիի կալուածաթուղթերը (տիտս էնտ  
թայթրլս) փոխանցեն յիշեալ եկեղեցիի անունին, որպէս զի իրենց նոր  
եկեղեցիի շինութեան համար մորթկէյմ կարենան առնել, պայմանաւ որ  
եկեղեցեպետական այս կալուածաթուղթերը դարձեալ Առաջնորդարանի անու-  
նին փոխանցուին մորթկէյմի ամբողջական գումարը վճարելէն անմիջապէս  
ետը":

Հաճեցէք պաշտօնապէս գրել մեզի, սոյն կալուածաթուղթերուն  
փոխանցումը կատարելու համար:

Մամբ Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՍԻՄՆ ԱՐԵՅԻՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Գանատայի

Քիւ 18066  
Մայիս 18, 1966

Հոգեշնորհ  
Տ. Զաւէն Վոդ. Արգումանեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Նորթ Ֆիլաժելֆիա.

Սիրելի Հայր Սուրբ,

Առաջնորդարանի Օժանդակ Միութեան մշակութային տարեկան ձեռնարկը, որ պիտի ունենայ համերգային յայտագիր, տեղի պիտի ունենայ Հոկտեմբեր 30, կիրակի յետմիջօրէին:

Այդ յայտագիրը Ձեր Օժանդակի կողմէ կրկնուելու փափաքը յայտնող Ձեր նամակը ղրկուեցաւ Ատենապետ Տիկին Աստղիկ Իգնատիոսեանի, որ վրստահաբար պատասխանը պիտի փութացնէ:

Երգչուհի Քէյ Արմէնի, ջութակահար Վարդան Մանուկեանի եւ ուրի ձօրձ Մկրտիչեանի հասցները կը կցեմ այս գիրին:

Իր ատենին շնորհակալութեամբ ստացայ 64րդ Տարեկան Ռեմական Պատգամաւորական Ժողովի ատենագրութիւնը, որուն վրայ սրբագրութիւններ կատարելով անմիջապէս ղրկած էիք: Պրն. Տիգրան Յ. Պօյաճեանն ալ շուտով վերադարձուցած էր իր օրինակը փոքր ղիտողութեամբ մը: Որով կարողացանք իսկոյն բազմազրել ատենագրութիւնը եւ օրինակ մը Ձեզի ղրկել երէկ: Այս տարի, Ձեր շնորհիւ, կարողացանք "հարուածային" արագութեամբ աւարտել այդ աշխատանքը: Ձեր վարձքը կատար:

Այս առթիւ կուզեմ անձնական քան մը ըսել Ձեզի: Պրն. Կոտալագեան, "Արեւ" Թերթի խմբագիրը, անցեալ շաբթուն Առաջնորդարան հանդիպեցաւ եւ տեսակցութեան ատեն անշուշտ իօսք բացուեցաւ Ձեր մասին: Հաւանաբար մէկ երկու շաբաթէն դարձեալ նիւ Եորք իջնէ նիւ ինկլէնտէն: Պիտի փափաքի որ տեսակցութիւն մը կարգադրեմ Ձեզի հետ: Իր գալէն մէկ երկու օր առաջ ես կը հեռաձայնեմ Ձեզի: Ուրախ պիտի ըլլամ, եթէ կարելիութիւն ունենաք, որ այդ հանդիպումը ունենաք անոր հետ:

Մնամ սիրով եւ յարգանք

Սուրեն Մանուկեան

Քիւ 24895

Սեպտեմբեր 20, 1974

Մեծայարգ  
Տիար ճէք Վիշապ  
Ստենապետ ժխական Խորհուրդի  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Չէլթընհէմ, Փա.

Սիրելի Տիար ճ. Վիշապ,

Հոգշ. Տ. Արշէն Վրդ. Այվազեանի հետ ժխական Խոր-  
հուրդիդ ունեցած տեսակցութեան եւ խորհրդակցութեան հի-  
ման վրայ, Հայր Արշէնը կը նշանակենք Հոգեւոր Հովիւ  
Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ մեր համայնքին:

Հայր Սուրբը 1974 Հոկտեմբեր 7ին պիտի փոխադրուի  
Ֆիլատելֆիա, եւ Հոկտեմբեր 18, Կիրակի օր, առաջին Ս.  
Պատարագը պիտի մատուցանէ իբրեւ Հովիւ Ս. Երրորդութիւն  
Հայց. Եկեղեցւոյ:

Կ'աղօթենք որ Աստուծոյ շնորհը անպակաս ըլլայ մեր  
համայնքի անդամներուն վրայէն, եւ ժխական Խորհուրդին  
եւ Եկեղեցւոյ մէջ զորձող կազմակերպութեանց զործակցու-  
թեամբ Հոգեւոր Հովիւին ջանքերը արդիւնաւորուին, ամեց-  
նելու համար Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ հոգեւոր, կրթ-  
թական եւ ընկերային կեանքը, Աստուծոյ փառքին եւ մեր  
Սուրբ Եկեղեցւոյ պայծառութեան համար:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐԵՆՊԻՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ

Very Reverend  
Zaven Arzoumanian,  
Pastor

(Area Code 215)  
Church: ESsex 9-2515  
Residence: RAndolf 5-6999



**HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH**  
101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012

Սեպտեմբեր 9, 1970

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Հիւս. Ամերիկայի

Կիւ Եորք

Գերաշնորհ եւ Սիրելի Սրբազան Հայր,

Ինչպէս անցեալ տարիներուն այս տարուան համար եւս  
կը փափաքիմ կը թաթոշակի համար խնդրանք ներկայացնել:

Ինչպէս ծանօթ է Ձեզի այս կիսամեան պիտի ըլլայ վերջինը  
երկու մնացեալ դասերը առնելով մին թեմբըլ համալսարանէն եւ միսւն  
ալ Փենսիլվեյնիոյ համալսարանէն:

Երկու դասընթացքներուն համար արդէն վճարեցի 204.00 —երկու  
հարիւր չորս— տուար համաձայն ներփակուած հաշուեցոյցերուն:

Այս առթիւ կ'ուզէի Ձեր Սրբազնութեան յայտնել թէ Եփսական  
Խորհուրդս իր երէկուան նիստին նկատի առաւ իմ խնդրանքը որ յառա-  
ջիկայ 12 ամիսներու ընթացքին ազատ կացուցուիմ իմ ամէնօրեայ գրա-  
սենեակի աշխատանքներէն որպէսզի կարենամ մատենադարան յաճախելով  
սերտել իմ յառաջիկայ քննութեանց աշխատանքները ինչպէս նաեւ կատարել  
աւարտաճառիս կապակցութեամբ հարկ եղած գործը: Շաբաթը մէկ օր, Զո-  
րեքշաբթի, պիտի դամ գրեսենեակ: Կիրակի օրեր պաշտամունք պիտի կա-  
տարեմ առաւել ամէն խորհրդակատարութիւն: Կեանքարտուղարու հիւն մի-  
ջոցաւ պիտի իմանամ անյետաձգելի կարիքներու մասին:

Արդ, եթէ համաձայն էք հաճեցէք Ձեր գրաւոր արտօնութիւնը  
տալ որպէսզի Եփսական Խորհուրդը եւս տեղեակ մնայ Ձեր արտօնութեանը:  
Խորհուրդս համաձայնութիւն յայտնեց այս մասին:

Յուսաւով որ կարելոր թերացումներ չեմ արձանագրեր յառա-  
ջիկայ տարուան ընթացքին կը հայցեմ Ձեր աղօթքներն ու մաղթանքները:

Յարգանք եւ եղբայրական սիրով  
աղօթակից,  
*Zaven Arzoumanian*  
Զաւէն Եվրդ. Արուստեան, Հովիւ

Քիւ 24465

Փետրուար 20, 1975

Հոգեշնորհ  
Տ. Արշէն Վրդ. Այվազեան  
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Նախագահ Ժիական Խորհուրդի  
Չէլթընիամ, Փա.

Սիրելի Հայր Արշէն,

Ստացած ենք Փետրուար 5, 1975 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը  
հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ Փետրուար Թիւ զումարուած համայնքիդ  
Ժիական Ժողովին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի վեց անդամոց ընտ-  
րութիւնը, եւ ներկայացնելով բուհարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք  
ընտրուած անձերու վաւերացման գաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Ժիական Ժողովը տեղի ունեցած է թեմական  
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Ժիա-  
կան Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Անաջնորդարան ղրկել Ժիական Խորհուրդի նորընտիր  
Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր  
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան սարի մը, ի  
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր  
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ՅՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈՂՈՍ

Առաջնորդ

Գերմ Երէցեան  
Նոյեմի Գաբելեան  
Արա Եաթարեան  
Էտուար Զարգադեան  
Հարրի Անտոնեան  
Սեդուհ Մինասեան